



1918

中国-俄罗斯友谊纪念碑

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ  
(12-14 յունիսի, 2013 թ.)**



*«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը շարունակէ մնալ հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու եւ իղէալներու աննկուն առաքելը, համահայկական մտածողութեան առաջընթաց ջահակիրը, ազգային միասնականութեան ջերմ ջատագովը՝ իր ժողովուրդի բռնաբարւած իրաւունքներուն քաջ պաշտպանը»:*

**ԱՐԱՄ Ա  
ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ**

Չորեքշաբթի՝ 2013 թականի յունիսի 12-ի առաւօտեան, Արամ Ա Կաթողիկոսի նախագահութեամբ բացւեց եւ սկիզբ առաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը՝ Անթիլիասի Մայրավանքի վեհարանի դահլիճում: Այս ժողովը չորս տարին մէկ անգամ է գումարում, որտեղ քննարկուում է անցնող շրջանի գործունէութիւնը եւ միաբանութիւնից ու թեմերից ընտրած պատգամաւորների աշխոյժ մասնակցութեամբ նոր ուղիներ է փնտրում Ս. Աթոռի գործունէութիւնն առաւել աշխուժացնելու համար՝ ի խնդիր Հայ Եկեղեցու եւ ժողովրդի կեանքի բարգաւաճման:

Բացման նիստում, յետ դիւանի ընտրութեան եւ օրակարգի ու ժամանակացոյցի որդեգրման, Արամ Ա Վեհափառ Հայրապետը լռեց իր հայրապետական պատգամը: Վեհափառ Հայրապետն իր պատգամում անդրադարձաւ ժողովրդի ակնկալիքներին՝ նշելով. «Մեծ ակնկալութիւններ ունի մեր ժողովուրդը դարաւոր այս Ս. Աթոռէն: **Չենք կրնար, իրաւունք չունինք անտեսելու մեր ժողովուրդին տակաւ աճող կարիքներն ու սպասումները: Չենք կրնար, իրաւունք չունինք լուռ ու անտարբեր մնալու մեր ժողովուրդը յուզող տեղական կամ համահայկական խնդիրներուն ու մարտահրաւերներուն նկատմամբ»:** Ապա Վեհափառ Հայրապետն անդրադարձաւ գլխաւոր երեք կէտերի.

- 1) Սփիւռքը վերակազմակերպել եւ վերակենսաւորել
- 2) Երիտասարդութեանը շաղախել մեր հոգեւոր, բարոյական եւ ազգային արժէքներով
- 3) Պահանջատիրական պայքարին նոր որակ եւ ուժականութիւն տալ

Սփիւռքը վերակազմակերպելու եւ վերակենսաւորելու մասին խօսելով՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Սփիւռքի կազմակերպման եւ գոյատեւման մէջ ճակատագրական եղաւ դերը եկեղեցուց. նոյնը պէտք է ըլլայ այսօր Սփիւռքի վերակազմակերպման եւ վերակենսաւորման մէջ: Մեր թեմական կառոյցները եւ յատկապէս մեր ծովափերը, որոնք կը կազմեն հիմքը թեմի կամ գաղութի կեանքին, պէտք է դուրս գան իրենց ներամփոփ գոյավիճակէն ու ինքնակենտրոն գործունէութենէն՝ անտարանջակն ու դաստիարակչական առաքելութիւնը եւ ազգային ծառայութիւնը դարձնելով իրենց առաքելութեան մղիչ ուժը»:

Երիտասարդութեանը մեր կեանքում ներկայութիւն դարձնելու հարցին անդրադառնալով՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Երիտասարդութեան գործօն մասնակցութիւնը մեր կեանքին կը նշանակէ մեր համայնական կեանքը կազմող կառոյցներու երիտասարդացում, անոնց մօտեցումներուն մասնագիտականացում եւ անոնց գործե-

լակերպերուն ու գործունէութեան վերանորոգում: Անհրաժեշտ է ձերբազատիլ կաղապարած տեսակէտներէ, զմուսած մտածողութենէ, սուկ եղածը պահելու մտավախութենէն եւ մեր կեանքը վերակազմակերպելու ու վերաշխուժացնելու կամքով շաղախած եւ տեսիլքով զսպանակած ընթացք մը ճշտել: Երիտասարդութեան դերը ճշտորոշիչ է այս գծով»:

Իր պատգամի վերջին բաժնում Վեհափառ Հայրապետն անդրադարձաւ պահանջատիրութեան անհրաժեշտութեանը եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ունեցած դերին, եւ վերահաստատելով՝ նշեց. «Յեղասպանութիւնը ապրած եւ իր կաթողիկոսական կայքէն աքսորած ծերունազարդ Սահակ Կաթողիկոս հայ ժողովուրդի կեանքի ամէնէն ողբերգական պայմաններուն մէջ իր պահանջատիրական ձայնը բարձրացուց: Նոյնը կատարեցին իրեն յաջորդող մեր հայրապետները: Նոյնը պիտի շարունակենք կատարել մենք՝ յանուն իրաւագրկած մեր ժողովուրդին ու իր սրբազան դատին»:

Իր ժողովուրդի մտահոգութիւններուն ու մարտահրաւէրներուն, պայքարին ու պահանջատիրութեան հետ ինքզինքն նոյնացուցած, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ մնալ՝ վերանորոգ հաւատքով, նւիրումով ու տեսիլքով՝ հոգեւոր, բարոյական եւ ազգային արժէքներու ու իղէպներու անցկուն առաքեալը, համահայկական մտածողութեան յառաջընթաց ջանակիրը, ազգային միասնականութեան ջերմ ջատագովը եւ իր ժողովուրդի բռնաբարւած իրաւունքներուն քաջ պաշտպանը»:

Ժողովի երկրորդ նիստը յատկացուց Ազգային Կենտրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի ատենագրութեան ներկայացմանը՝ տեսաժապաւէնի միջոցով, որը ամփոփ գծերով պատկերացում տուց անցնող քառամեակում կատարւած աշխատանքների մասին. տեղեկութիւնները քաղւած էին աւելի քան 150 էջերից բաղկացած ընդարձակ տեղեկագրից: Այս յաջորդական երկու նիստերում տեղի ունեցաւ սոյն տեղեկագրի քննարկումը: Արտայայտւած գաղափարներն ու արծարծւած մտքերը միտում էին կրօնական դաստիարակութեան զարկ տալ՝ նախանձախնդրութեամբ մօտենալով մեր եկեղեցու արժէքներին, յատկապէս փնտրելու համար ելքեր՝ երիտասարդութեանը եկեղեցուն մօտենցելու առումով: Ինչպէս նաեւ խօսուց ու բացատրութիւններ տրուեցին սկզբունքով առաջիկայ սեպտեմբերին Ս. Էջմիածնում երկու գահակալների՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսի նախագահութեամբ գումարելիք եպիսկոպոսական ժողովի մասին:

Ժողովը դրականօրէն արտայայտուց այն բոլոր աշխատանքների մասին, որոնք Հայ Եկեղեցին բացում են օտարների առջեւ՝ ծանօթացնելով մեր արժէքները, յատկապէս միջ-եկեղեցական յարաբերութեանց բնագաւառում:

Հայ Եկեղեցու բարեկարգութեան, Էջմիածին-Անթիլիաս փոխ-յարաբերութեան, հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան, հայ երիտասարդութեան նկատմամբ հոգածութեան, հայ յարանւանութեանց հետ յարաբերութեանց եւ իւրաքանչիւր տարին Կաթողիկոսութեան կողմից յատուկ լուսարձակի տակ բերելու աշխատանքները դրական որակեցին՝ հակառակ սահմանափակ մարդուժի եւ նիւթական համեստ պայմանների:

Օրայ վերջին նիստը յատկացուց Ազգային Կենտրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի ատենագրութեան ներկայացմանը՝ տեսաժապաւէնի միջոցով, որը ամփոփ գծերով ներկայեցնում պատկերացում տուց անցնող քառամեակում կատարւած աշխատանքների մասին. տեղեկութիւնները քաղւած էին շուրջ 140 էջերից բաղկացած ընդարձակ տեղեկագրից:

\* \* \*

Յունիսի 13-ի առաւօտեան, Տէրունական աղօթքով եւ Արամ Ա Կաթողիկոսի օրհնութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովը շարունակեց իր աշխատանքները՝ գլխաւորաբար կենտրոնանալով Կենտրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի տեղեկագրի վրայ:

Իրարայաջորդ նիստերով նաեւ տեղի ունեցաւ լայնածաւալ տեղեկագրի քննարկումը, որն ընդգրկում էր Քաղաքական Ժողովի իրագործած ծրագրերը՝ սկսելով ազգային, տեղական մակարդակից, մինչեւ համասփիւռքեան, համահայկական եւ միջազգային մակարդակը: Ժողովականներն իրենց հարցումներն ուղղեցին Քաղաքական Ժողովի անդամներին եւ ստացան պատասխաններ:

Քաղաքական Ժողովի կողմից կատարւած աշխատանքների գծով ամբողջական արժեւորումը տեղի ունեցաւ Ազգային Ընդհանուր Ժողովի մասնակիցների կողմից՝ յատկապէս գնահատելով սահմանափակ մարդուժով ու նիւթական նազագոյն հնարաւորութիւններով իրագործւած հսկայական ծրագրերը:

Այս յատուկ կերպով խօսուց հետեւեալ կէտերի մասին.

1) Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնախմբի մասին, թէ ի՞նչ հեռանկարներ կան իրագործելիք, ինչպէս նաեւ ազգային դպրոցներում կրօնի դասաւանդման մասին խօսուց:

2) Մնայուն հիմնադրամ առաջացնելու գաղափարը մնում է անհրաժեշտ եւ այժմէական: Վեհափառ Հայրապետն այս ուղղութեամբ լայն բացատրութիւն տուց եւ շեշտեց մնայուն հիմնադրամ ունենալու անհրաժեշտութիւնը, որպէսզի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը տնտեսական դժարութիւններ չունենայ:

3) Հայկական պահանջատիրութեան գծով Վեհափառ Հայրապետի միջազգային տարողութեամբ կատարւած

աշխատանքը եւ թէ՛ կաթողիկոսարանում, եւ թէ՛ դրանից դուրս տեղի ունեցած միջազգային գիտաժողովները լուսարձակի տակ առան Կիլիկեան Ս. Աթոռի հետեւողականութիւնը՝ այս առնչութեամբ: Ինչպէս նաեւ անդրադարձ եղաւ այս տարւայ ապրիլի 24-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսի միատեղ ստորագրած պահանջագրի մասին: Դեռեւս, խօսեց Յեղասպանութեան 100-ամեակին իրագործելիք ծրագրերի ու նպատակների մասին: Այս ծիրում նաեւ խօսեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ Ղարաբաղում կառուցւած Նոր Կիլիկիա գիւղի մասին:

4) Սիրիահայ համայնքի մասին յատուկ կերպով խօսեց եւ բացատրութիւններ տրւեցին, Սիրիայի ներկայ կացութեան պատճառով սիրիահայութեան դիմագրաւած դժարութիւնների եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու պատկան թեմերի միջոցով կատարւած օժանդակութիւնների մասին: Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով եւ մանրամասնօրէն բացատրութիւններ տւեց սիրիահայութեան օժանդակութեան համար հաւաքւած նիւթական գումարների եւ դրանց գործուղման մասին: Վեհափառ Հայրապետը նշեց. «Ամբողջական նկիրումով պիտի շարունակենք աջակցիլ եւ օժանդակել սիրիահայութեան»:

5) Յունաստանի տնտեսական ճգնաժամի մասին եւս խօսեց: Յատկապէս, յունահայ Թեմի կրած ազդեցութիւնն այդ ճգնաժամից: Յունաստանի պատգամատրներից մէկը մանրամասնօրէն բացատրութիւններ տւեց այդ ուղղութեամբ եւ խօսեց Թեմի դիմագրաւած դժարութիւնների մասին:

6) Անթիլիաս-Էջմիածին փոխ-յարաբերութեանց հարցն եւս մասնաւոր կերպով օրակարգի նիւթ դարձաւ յընթացս ժողովի: Այս գծով կրկին անգամ վերահաստատուեց Կիլիկեան Ս. Աթոռի յանձնառութիւնը՝ եղբայրական ոգով շարունակել գործակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ՝ ի խնդիր Հայ Եկեղեցու եւ ազգի ներքին միասնականութեան պահպանման:



7) Հայաստանի պետութեան հետ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործակցութիւնն եղաւ սիրալիր: Կիլիկեան Ս. Աթոռի ազգային թէ միջազգային գործունէութիւնն ու արժէքը ծանօթ են Հայաստանի իշխանութիւններին եւ գնահատւած նրանց կողմից:

8) Խօսեց նաեւ Ս. Աթոռի կողմից իրագործւած շինարարական ծրագրերի, թէ՛ Կաթողիկոսութեան պատկանող կալւածների վրայ կատարւածների, եւ թէ՛ Ղարաբաղում Նոր Կիլիկիա գիւղի շինութեան մասին: Անդրադարձ եղաւ նաեւ արդէն իսկ կատարւած մի շարք շինարարական աշխատանքների, որոնք իրագործում են թեմերը, ինչպէս նաեւ ազգային բարերարների գործակցութեամբ ու աջակցութեամբ: Ծինարարական գլխաւոր աշխատանքներից են՝ Անթիլիասի մայրավանքում վեր խոյացած Ապրիլեան Նահատակների Յուշարձանի վերանորոգումը, Բիքֆայայում միաբանական շէնքի կառուցումը, Ապրիլեան Նահատակների խորանի կառուցումը, Ապրիլեան յուշարձանի շրջապատի վերադասաւորումը, ինչպէս նաեւ Զիբէլում՝ «Թոշնոց բոյն»-ի ամենահին շինութիւնը Յեղասպանութեան թանգարանի վերածելու ծրագիրը:

Վեհափառ Հայրապետն ընդհանուր արժեւորումը կատարելով իրականացւած քննարկումների՝ իր խօսքն ամփոփեց հետեւեալ երկու մտածումներով.

«ա) Մեր կատարած գործը առաքելութիւն է: Մենք գնահատականի կարիք չունինք, արժեւորումի կարիք ունինք, որպէսզի մեր կատարած գործն ըլլայ աւելի կատարեալ ու արդիւնաւէտ: բ) Մեր կատարած գործը չի՛ սահմանափակիր որոշ շրջագիծի կամ որոշ թեմերու ներքին սահմաններուն մէջ, այլ՝ համահայկական տարողութիւն ունի»:

Ազգային Ընդհանուր Ժողովի երկրորդ օրը միայն կատարւած աշխատանքի վերաբերելով չէր, այլեւ՝ բոլոր հարցերի քննարկումից բխած նոր ուղղութիւնների ճշտման առիթ եղաւ:

Երկրորդ օրւայ ժամանակացոյցում երկու նիստեր էին յատկացել՝ ա) Հայ ժողովրդի իրաւունքների հետապնդումը եւ Յեղասպանութեան 100-ամեակի ուղղութեամբ կատարւած աշխատանքներին, բ) Սիրիահայութեան ներկայ կացութեան մասին Բերիոյ Հայոց Թեմից ուղարկւած զեկուցման եւ սիրիահայութեան մասին պատրաստուած բանաձեւի ընթերցմանը, գ) Քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակի կատարած աշխատանքներին:

Իրաքանչիւր զեկուցման ավարտին իրականացւեցին քննարկումներ եւ լուսաբանութիւններ տրւեցին:

Սպահանի Հայոց Թեմի կողմից սոյն ժողովին մասնակցել էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամատրական Ժողովի Դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը, Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նուէլ Մինասեանը եւ Հայ Դատի Նոր Զուղայի Յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Աշոտ Դաւթեանը:



ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ  
ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ  
ՄԱՐՄԻՆ

**SYRIAN ARMENIAN COMMITTEE  
FOR URGENT RELIEF AND REHABILITATION  
ALEPPO-SYRIA**

23 ՅՈՒՆԻՍ 2013

**ԾՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ  
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ**

Յարգելի՛ Անդամք՝

Սուրիահայության Շտապ Օգնության եւ Վերականգնումի Մարմնիս անունով կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը, Սուրիոյ տագնապին պատճառով Սուրիոյ հայության դիմագրաւած դժուարութիւններու յաղթահարման աշխատանքներուն մէջ ձեր ցուցաբերած աջակցության համար:

Ձեր կողմէ փոխանցուած գումարները հերթաբար կը ստանանք եւ համապատասխան ձեւով կը տրամադրենք Սուրիոյ հիմնական շրջաններու հայկական համայնքներուն՝ Հալէպ, Դամասկոս, Ծովաի (Լաթաքիա, Քեսապ) եւ Ճէզիրէ: Այս գումարները, որոնք ժողովուրդի օգնության փութալու պահանջուած ծախսերն են, կը յատկացուին սննդեղէնի ապահովման, առողջապահական խնդիրներու սատարման, բնակարանային վնասներու հատուցման եւ կրթական բնագաւառի օժանդակության համար:

Մեր ժողովուրդի ապրած այս դժուարին օրերուն եւ քաղաքական-ապահովական ցարդ անկանխատեսելի պայմաններուն մէջ, յուսադիր ենք, որ ձեր նախաձեռնած օժանդակության աշխատանքները պիտի շարունակուին նոյն ուժականութեամբ, յանուն Սուրիոյ հայ համայնքի գոյատեւման:

Մեծապէս կը գնահատենք ձեր կատարած ներդրումները եւ ձեր աշխատանքներուն անսպառ երթ կը մաղթենք:

ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՄԱՐՄԻՆ

Aleppo-Syria Tel.00963-21-4646352, fax00963-21-4641497, [www.syriashdab.com](http://www.syriashdab.com), [info@syriashdab.com](mailto:info@syriashdab.com)

# ՆՍՏ՝ ՄԵԾ ԵՂԵՆԻ ԶՈՒՅՐԻ ՄՐՔԱԴԱՍՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Յանձնաժողովի Հինգերորդ Ժողով  
(7-8 մայիս 2013, Մայր Աթոռ Ս. Էջմիածին)

2013 թականի մայիսի 7-ին եւ 8-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարեց Մեծ Եղեռնի զոհերի սրբադասման հարցի շուրջ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Յանձնաժողովի հինգերորդ ժողովը: Ժողովին ներկայ էին.



- Գերշ. Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսեանը (Համաատենապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն)
- Գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանը (Համաատենապետ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն)
- Գերշ. Տ. Նաթան արքեպս. Յովհաննիսեանը (Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն)
- Գերշ. Տ. Մուշեղ արքեպս. Մարտիրոսեանը (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն)
- Գերշ. Տ. Վազգէն եպս. Միրզախանեանը (Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն)



- Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը (Ատենադպիր, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն)
  - Գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը (Ատենադպիր, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն)
- Ժողովից բացակայում էր գերշ. Տ. Անուշաւան եպս. Դանիէլեանը (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն):



Յանձնաժողովն իր աշխատանքներն սկսեց առաւօտեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիւանատան ժողովարահում՝ աղօթքով: Ատենապետ Սրբազան Հայրերը բարի գալուստ մաղթեցին Յանձնաժողովի անդամներին, ապա փոխանցեցին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Վեհափառ Հայրապետների օրհնութիւնները եւ բարեմաղթանքները՝ Յանձնաժողովի աշխատանքների կապակցութեամբ:

Ժողովականները վերանայեցին նախորդ շրջանում կատարած աշխատանքները եւ նրանց հիման վրայ եզրայանգումների եկան: Նկատի ունենալով Վեհափառ Հայրապետների յանձնարարականը, ժողովականներն զբաղեցին Մեծ Եղեռնի ընթացքում նահատակների սրբադասման հարցով, յետագային թողնելով Մեծ Եղեռնից առաջ, նախկին դարերի հայ նահատակների սրբադասման հարցը:

Ժողովն իր աշխատանքներն աւարտեց չորեքշաբթի՝ 8 մայիս 2013-ի երեկոյեան:

Հինգշաբթի առաւօտ, Համբարձման տօնի օրը, որ զուգադիպեց յաղթանակի օրայ տօնակատարութեանը, ժողովի անդամները ներկայ եղան Երեւանի Յաղթանակի յուշարձանի մօտ տեղի ունեցող տօնակատարութեանը:

*Յանձնաժողովի Դիւան  
8 մայիս 2013, Մայր Աթոռ Ս. Էջմիածին*

# ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ՆՇԻՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Հինգշաբթի՝ մայիսի 30-ի երեկոյան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության բացօդեայ տարածքում, նախաձեռնությամբ ՀՀ Հիմնադրման 95-ամեակի Տօնակատարության Նոր Զուղայի Ցանձնախմբի, մեծ շուքով նշեց Հայաստանի առաջին անկախ Հանրապետության 95-ամեակը: Միջոցառմանը ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծափինշահի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանը, Երեւանի Պետական Համալսարանի Իջեւանի մասնաճիւղի Հումանիտար ֆակուլտետի դեկան եւ դասախօս Վարդան Ալեքսանեանը, հոգեւորականաց դասը, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Ցանձնախմբի անդամները եւ հոծ թուով ժողովուրդ:

Տօնակատարության պաշտօնական բացումը կատարեց Հանրապետական մաթթանքով՝ նախագահությամբ առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցությամբ հոգեւորականաց դասի: Երգեցողությամբ արարողութեանը մասնակցում էր նաեւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարությամբ: Սույն բաժինն աւարտեց դրօշակի արարողությամբ, որն իրագործեց Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Սկաւտական Միաւորի անդամների միջոցով եւ «Մեր Հայրենիք» հիմնի յոտնկայս ունկնդրությամբ:



Ծրագիրը շարունակւեց հանդիսավարներ Նայիրի Թահմազեանի եւ Արթին Մուրադեանի բացման խօսքով, որտեղ ասած էր. «Պատմական Հայաստանի մէկ մասի վրայ ստեղծւած հայկական պետականութիւնը հանդիսացաւ ո՛չ միայն հայի յոյսն ու ապաւէնը, երագած աւետեաց երկիրը, այլեւ՝ հիմնաքարը մեր մեծ տեսլականի՝ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի»:



Բացման խօսքին յաջորդեց ՀՀ Հիմնադրութեան 95-ամեակի Տօնակատարութեան Նոր Զուղայի Յանձնախմբի խօսքը, Յանձնախմբի ներկայացուցիչ Մադլէն Ղարիբեանի ընթերցմամբ, որտեղ կարեւորութեամբ նշւած էր. «Մայիս 28-ի կերտած անկախութիւնը կապւած է մեր վաղըայ անելիքների հետ, պատմութիւնը միայն անցեալ չէ, հայորդին պէտք չէ միայն պատմութիւն իմանայ, այլ նայելով անցեալին՝ պէտք է կարողանայ ուղղել իր ներկան եւ ստեղծել ապագան: Մայիս 28-ը պարզ անկախութեան տօն չէ, այլ պատմական փորձառութիւն: Այդ օրերին կատարւած աշխատածենն ու արձանագրած յաջողութիւնները պէտք է օգտագործենք այսօր»:



Այնուհետեւ ամենամեայ շքերթ-տողանցքով մայիսեան սխրագործ հերոսներին իրենց յարգանքի տուրքը մատուցեցին՝ Նոր Զուղայի եւ Ծահինջահրի ազգային մարմինները, շրջանի Հայ Դատի Յանձնախումբը, հայոց ազգային դպրոցների անձնակազմերը, Ծնողական խորհուրդները եւ աշակերտները, համայնքի երգչախումբ-

բերի ու միութիւնների վարչութիւնները, «Ռուբէն» Երիտասարդական եւ Նոր Զուղայի ու Ծահինջահրի «Թ. Թադէոսեան» Պատանեկան միութիւնների, ՀՀ հիմնադրման 95-ամեակի Տօնակատարութեան Յանձնախմբի եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկաուտական Միաւորի անդամները:



Ծքերթից յետոյ, բանախօսութեամբ հանդէս եկաւ Երեւանի Պետական Համալսարանի Իջեւանի մասնաճիւղի Հումանիտար ֆակուլտետի դեկան եւ դասախօս Վարդան Ալեքսանեանը:



Նա իր ելոյթի սկզբում Նոր Զուղայի մասին դրական արտայայտւեց, ապա անկախութիւնը բացարձակ արժէք համարելով, այսպէս շարունակեց. «Անկախութիւնն այն պայմանն ու միջոցն է, որն ապահովում է ազգի առաջընթացն ու զարգացումը: Նրա արժանապատիւ դերը եւ տեղը ազգերի համակեցութեան մէջ է: Անկախութիւն կերտելու առանձնաշնորհն աշխարհում պատկանում է ուժեղ, կամային եւ կազմակերպական ներուժ ունեցող ազգերին. թոյ-



լերին եւ տկարներին այն հասու չէ»:



Խօսքի շարունակութեան մէջ բանախօսն անդրադառնալով Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերին, ճշեց նաեւ Հայաստանի առաջին Հանրապետութեան կազմաւորման մասին եւ աւելացրեց. «Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադիր հայրերը մեզ թողել են երեք պատգամ-խորհուրդներ, որոնցով պէտք է առաջնորդուենք մենք եւ յետագայ սերունդները: Այդ պատգամներն են՝ միաբանութիւնը, սեփական ուժերին ապաւինումը եւ ինքնամոռաց ու անձնուրաց նւիրածութիւնը պետականաշինութեան գործին»: Վարդան Ալեքսանեանն իր խօսքի աւարտին մատնանշեց ներկայ Հայաստանում տնտեսական, կրթական եւ հասարակական ոլորտներում կիրառուող մի շարք բարեփոխումներ, ապա անդրադառնալով երկրի արտաքին քաղաքականութեանը՝ կարեւորութեամբ ընդգծեց. «Հայաստանում Դաշնակցութիւնը եւ որոշ քաղաքական ուժեր պահանջում են անվերապահօրէն հետ վերցնել Հայաստանի կառավարութեան ստորագրութիւնները հայ-թուրքական չարաբաստիկ արձանագրութիւններից, քանի որ այդ արձանագրութիւններում անգամ չքողարկած կերպով կան նախապայմաններ, որոնք կարող են մեզ ծանր վիճակում դնել, եւ դրանցից միայն մէկը՝ հայ-թուրքական սահմանի ճանաչումն է, որը մեզ գրկելու է Վիլսոնեան իրաւարար վճռով նախատեսած Մեծ Հայաստանի սահմաններից»:



Հանդիսութեան պաշտօնական բաժնից անմիջապէս յետոյ, սկսեց տօնախմբութեան գեղարուեստական բաժինը, որտեղ ազգային-յեղափոխական երգերի կենդանի կատարմամբ ներկաների տօնական տրամադրութիւնը բարձրացրեց մեներգիչ Արթին Քելիշեանը, «Անի» նազախմբի ընկերակցութեամբ: Երգերի շարանը գեղեցկօրէն ընդմիջեց «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի «Կոունկ» ասմունքի խմբի անդամներ Մանիա Ղուկասեանի, Թային Մովսիսեանի եւ Կարէն Խանլարեանի ասմունքի կատարմամբ՝ ներկայացնելով Վարանդի «Հայկ Դիւցազն» բանաստեղծութիւնը:

Մայիս 28-ին նկրած տօնակատարութիւնն աւարտեց շքեղ հրավառութեամբ:

Յատկանշական է, որ «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան կողմից դասաւորել էին դիմաչարդարման եւ նկարչութեան կրպակներ, որտեղ տօնակատարութեան ամբողջ ընթացքում երեխաների գեղեցիկ դէմքերի վրայ եռագոյն դրօշ պատկերելուց բացի, նրանց առիթ էր ընձեռնուում ջրաներկի եւ սեփական մատների միջոցով թղթի վրայ նկարել հայրենասիրական թեմաներով նկարչութիւններ: Իսկ «Ռուբէն» Երիտասարդական Միութիւնը պատրաստել էր օրան առնչուող սկաւառակներ եւ պիտակներ, որոնք բաժանեցին ներկաներին:



**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ**



Երեքշաբթի՝ 2013 թականի Մայիսի 14-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Ս. Ամենափրկչեան Վանք ժամանեց Լիբանանից ժամանած երեք հոգանոց մտաւորականների մի պատիրակութիւն՝ որին անդամակցում էին մէկ քահանայ եւ համալսարանի երկու դասախօսներ. վերոնշեալները «Ջոմհուրի Էսլամի» պետական լրատուական կազմակերպութեան միջոցով հրաւիրել էին Թեհրան՝ «Կրօն եւ լրատումիջոց» համագումարին մասնակցելու համար: Ս.Ա. Վանքի Ծաղկեայ Դահլիճում պատիրակութեանն ընդունեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը: Ներկայ էին նաեւ Ծախիճշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը եւ արժն. Տ. Մեսրոպ քինյ. Գալստանեանը:

Գերշ. Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթելով հիւրերին, համապարփակ կերպով բացատրութիւններ փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի մասին եւ Նոր Զուղայում ու շրջաններում բնակող հայութեան ընդհանուր կացութեան, ազգային-հասարակական կեանքի ե գործունէութեան մասին: Նա պատասխանելով հիւրերի մի շարք հարցումներին՝ շեշտեց, որ Իրանում հայութեան իրաւունքներն ամրագրւած են սահմանադրական օրէնքներով եւ պետութեան մօտ հայերի նկատմամբ առկայ է մեծ համակրանք: Առաջնորդ Սրբազան Հայրն ընդգծեց, որ մինչ Իրանի սահմաններից այն կողմ որոշ երկրներ շարունակելով իրենց հակահայ քաղաքականութիւնը՝ ոչնչացնում են մեր դարաւոր պատմա-մշակութային կոթողները, այստեղ՝ Իրանի ամբողջ տարածքում, պետական մակարդակով ծրագրեր են իրագործում՝ պահպանելու եւ անհրաժեշտ պարագաներում նորոգելու պատմական արժէքներ կայացնող հայկական ժառանգութիւնները: Նաեւ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման եւ մեր արդար Դատի կապակցութեամբ, պետական մարմինների արտօնութեամբ միջոցառումներ են կազմակերպում ամենամեայ դրութեամբ:

Պատիրակութեան անդամներն իրենց հիացմունքը յայտնեցին՝ Իրանում ապրող քրիստոնէայ համայնքների գործօն եւ բարգաւաճ իրավիճակի կապակցութեամբ, եւ շեշտեցին, որ Իրանում գոյութիւն ունեցող

միաստուածեան կրօնների համակեցութիւնն ու բարիդրացիական յարաբերութիւնները լաւագոյն օրինակը կարող են հանդիսանալ ամբողջ երկրների համար՝ սիրոյ, համերաշխութեան, հանդուրժողականութեան եւ փոխադարձ յարգանքի հիմունքներով մի աշխարհ ստեղծելու:

Հանդիպումից յետոյ, պատիրակութիւնն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» անան թանգարան:

Առիթը պատեհի համարելով, Իրանի «ԻՌԻՍԱ» լրատումիջոցի թղթակիցը գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի հետ հարցազրոյց ունեցաւ: Գերշ. Սրբազան Հայրը պատասխանելով Սիրիոյ մէջ ծաւալւած ներքին խնդիրների նկատմամբ հայութեան եւ առհասարակ քրիստոնէութեան դիրքորոշման մասին հարցումներին՝ նշեց, որ քրիստոնէութիւնը լինելով սիրոյ, խաղաղութեան եւ եղբայրութեան կրօն՝ դատապարտում է ամէն տեսակ ոխակալութիւն, հակամարդկային արարք, մարդու իրաւունքները ոտնահարող եւ կեանքին սպառնացող գործողութիւններ, հետեւաբար վերջին երկու տարիներում Սիրիոյ մէջ տեղի ունեցող դէպքերը պէտք է խաղաղ միջոցներով շուտափոյթ լուծում գտնեն, որովհետեւ ակնյայտ է, որ մինչ այժմ տեղի ունեցող պատերազմական գործողութիւնները ցանկալի աւարտ չունենալով՝ աւելի են բարդացնում կացութիւնը: Գերշ. Սրբազան Հայրը դատապարտեց նաեւ Ասորի Ուղղափառ եւ Յոյն Օրթոդոքս համայնքների հոգեւոր երկու առաջնորդների առեւանգումը հակապետական ուժերի միջոցով, եւ այն համարեց պախարակելի եւ ամօթալի արարք:

Իրանի նախագահական ընտրութիւններին մասնակցելու վերաբերեալ թղթակցի ուղղած հարցումին պատասխանելով, առաջնորդ Սրբազան Հայրն ասաց, որ Իրանում ապրող հայութիւնը միշտ եղել է հաւատարիմ քաղաքացի եւ իր զգօն եւ սթափ մասնակցութիւնն է բերել երկրի ամբողջականութեան եւ զարգացման ուղղութեամբ տարող աշխատանքներին. այս վերաբերմունքը դարձեալ մղելու է իրանահայութեանը՝ իր քաղաքացիական պարտքն ու պարտականութիւնն անթերի կատարելու:

### ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ՏԵՐ ՓԱՌԷՆ ԱԻԱԳ ԲԱՀԱՆԱՅ ՄԻՐՋԱԽԱՆԵԱՆԻՆ



Կիրակի, 2013 թվականի մայիսի 5-ին, Թահինշահրում, յառաջացած տարիքում եւ երկարատեւ մաշեցնող հիւանդութիւնից յետոյ, իր մահկանացուն կնքեց Սպահանի Հայոց Թեմում շուրջ 4 տասնամեակ ծառայած հոգեւորական, 92-ամեայ արժն. Ս. Փառէն ա. քհնյ. Միրզախանեանը:

Հանգուցեալ Տէր Հօր յուղարկաւորութեան կարգը կատարեց երեքշաբթի, մայիսի 7-ին, Նոր Զուղայի Ա. Ստեփանոս եկեղեցում. այն եկեղեցում, որտեղ նա ձեռնադրել էր որպէս քահանայ եւ սկսել իր ծառայական կեանքը: Առաւօտեան ժամը 9:30-ին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց արժն. Ս. Մեսրոպ ա. քհնյ. Գալստանեանի ձեռամբ: Եկեղեցում ներկայ էին հոգեւորականաց եւ դպրաց դասերը, Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչներ, հանգուցեալի հարազատները եւ հոծ թուով հաւատացեալ ժողովուրդ՝ Թեմի տարբեր շրջաններից եւ Թեհրանից:



Ա. Պատարագին նախագահեց Թահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը:

Յընթացս Ա. Պատարագի, «Ողջուն»-ի պահից առաջ, հանգուցեալ Տէր Հօր դագաղը քահանայ հայրերի եւ սարկաւագների միջոցով եկեղեցու ատենից բերեց Ա. Խորան, որտեղ իր հոգեւոր եղբայրներից ու

բարեպաշտ ժողովրդից հրաժեշտ առաւ արժն. Ս. Փառէն ա. քհնյ. Միրզախանեանը: Այնուհետեւ հոգշ. Հայր Սուրբը Ա. Միւռոնով օժեց նրա ճակատն ու աջը՝ վերջին օծումը տալով նրան:

Խորհրդի կատարումից յետոյ՝ հոգշ. Հայր Սուրբն իր քարոզի մէջ ընդհանուր գծերով ներկայացրեց հանգուցեալի կենսագրականը՝ բարձր գնահատելով Տէր Հօր թողած վաստակը, ազգասէր, հայրենասէր եւ Աստծուն նւիրած նրա նկարագիրն ու կեցածքը, ասաց. «Հանգուցեալ Տէր Հայրը, իր հոգեւորականի ծառայութեան ընթացքում, եղաւ հաւատարիմ, պարտաճանաչ եւ ժրջան այն անձը, ով ամբողջութեամբ նւիրեց իր ազգին եւ ժողովրդին՝ վերահասու լինելով նրանց հոգեւոր կարիքներին, եւ անթերի ու անընդմէջ կերպով կատարեց կրօնական-եկեղեցական ծիսակատարութիւնները: Նա իր կենսուրախութեամբ եւ առոյգ բնաւորութեամբ՝ բարի ու տրամադրութիւն ստեղծող ազդեցութիւնն էր սփռում իր շուրջ, եւ մինչեւ իր կեանքի աւարտը պատասխանատու կեցածքով՝ մաքուր պահեց հոգեւորականի իր կոչումը»:

Այնուհետեւ հոգեւորականաց դասն իր վերջին հրաժեշտն ու համբոյրը փոխանցեց հանգուցեալ Տէր Հօրը, ասպա դագաղը կրկին տեղափոխեց եկեղեցու ատենան եւ առիթ տրեց ժողովրդին՝ իր հրաժեշտը տալու նրան:



Յուղարկաւորութեան արարողութիւնից յետոյ՝ հանգուցեալի դին տեղաւորեց եկեղեցու բակում, որտեղ նրա հարազատների կողմից ընթերցեց դամբանական, որի մէջ անդրադառնալով Տէր Հօր անհատական իրաչափութիւններին՝ շնորհակալութիւն էին յայտնել բոլոր սկագիրներին՝ ներկայութեան համար:

Արժն. Ս. Փառէն ա. քհնյ. Միրզախանեանի դին, հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի ձեռամբ եւ Թեմի բոլոր քահանայ հայրերի մասնակցութեամբ, ամփոփեց Նոր Զուղայի Հայոց Ազգային Գերեզմանատանը:

Վերադարձին, Ա. Ստեփանոս եկեղեցու սրահում, Գաղափարակից ընկերների անունից արտայայտեց պրն. Թաթուլ Օհանեանը, իսկ Կրօնական Խորհրդի եւ հոգեւորականաց դասի կողմից՝ արժն. Ս. Մեսրոպ ա. քհնյ. Գալստանեանը:

Հանգիստ՝ բազմավաստակ Տէր Հօր աճիւններին:

### ՏՕՆ Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԿՈՒՍԱՆԱՑ

Երկուշաբթի՝ 2013 թականի մայիսի 27-ին, Ս. Հովհաննեսի կոյսերի տոնին, Նոր Զուղայի Ս. Կատարինեան Մենաստանի եկեղեցում սուրբ եւ անմահ Պատարագ տեղի ունեցաւ նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի նախագահութեամբ: Պատարագիչն էր արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկերեանը: Ներկայ էին հոգեւորականաց դասը եւ հաւատացեալներ:



Յընթացս Ս. Պատարագի, բնաբան ունենալով «Ով ինձ դաւանի մարդկանց առաջ, ես էլ նրան կը դաւանեմ Իմ Հօր առաջ» անտարանական հատուածը, յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով Հովհաննեսի կոյսերին ու նրանց ապրած հաւատին եւ Ս. Կատարինեան Մենաստանում անցեալում ապրած կոյսերին ու նրանց ծաւալած գործունէութեանը: Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքում յիշեց նաեւ մայիսեան յաղթանակի նախօրէին հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարների ընթացքում հաւատով եւ յղյսով լեցուն սխրագործութիւնները:



Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Զրօրհնէքի եւ ապա Հոգեհանգստեան արարողութիւն՝ Ս. Կատարինեան Մենաստանի կոյսերի, Ն.Ջ. Հայունեաց Բարեգործական Ընկերութեան վախճանած անդամների եւ բարերարների, ու նաեւ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերի ընթացքում զոհուած հայ զաւակների հոգիների խաղաղութեան համար:

Եկեղեցական Արարողութիւնից յետոյ, Ընկերութեան հաւաքատեղիի սրահում կազմակերպել էր հիւրասիրութիւն, որի ընթացքում Ընկերութեան «Փարոս»

ասմունքի խմբի անդամները ներկայացրեցին զանազան ասմունքներ: Ներկաները վայելեցին նաեւ մի քանի երգերի կատարումներ:



Արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկերեանը շնորհակալական խօսք ուղղեց Հայունեաց Բարեգործական Ընկերութեան անդամներին՝ օրւայ արարողութեան եւ ընդունելութեան դասաւորութիւնները տալու համար, որից յետոյ Առաջնորդ Սրբազան Հայրն իր գնահատանքի խօսքով եզրափակեց ձեռնարկը:

\*\*\*

### ՏՕՆ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՆՆ Ի ՎԻՐԱՊ

Շաբաթ՝ 2013 թականի յունիսի 1-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ բազմաշարշար Հայրապետի վիրապից դուրս բերելու տօնին, Նոր Զուղայի համանուն եկեղեցում, որի անւանակոյտեան տօնն էր միաժամանակ, տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ՝ նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարգարեանը: Պատարագիչն էր արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Արարողութեանը ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը եւ համայնքի հաւատաւոր ժողովուրդը:



Յընթացս սուրբ Պատարագի, յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը՝ ներկայացնելով օրւայ խորհուրդը եւ վեր հանելով հաւատի ու Աստծու նկատմամբ յոյսի զօրութեան արդիւնքներն ու արգասիքները:

Ս. Պատարագի աւարտին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի աշ-մասունքի օրհնութեամբ կատարեց Զրօրհնէքի արարողութիւն, որից յետոյ եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարեստական կոկիկ յայտագիր՝ նկիրւած տօնին:

**ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄՊԱՀՆԵԻ  
ՆԱՄԿԻՆ ՈՒՐԲԱԾՕՐԵԱՅ  
ԱՂՕԹ-ԱՊԵՏԻՒ ԱՅԼԱԾ. ԹԱՀԵՐԻԻ  
ՄԱՀԻՆՆ ԱՌԹԻԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ**



*Սպահանի Հայոց Թեմի պատկերակոթիւնը մասնակցելով Սպահանի նախկին ուրբաթօրեայ աղօթապետ այաթ. Թահերիի թաղման յաջորդ օրւայ հոգեհանգստեան արարողութեանը՝ իր յարգանքի տուրքը մատուցեց հանգուցեալի յիշատակին:*

Չորեքշաբթի՝ 2013 թականի յունիսի 5-ի առաւօտեան, Սպահանի Հայոց Թեմի պատկերակոթիւնը, գլխաւորութեամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, եւ ներկայութեամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի, Իրանի Իսլ. Խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան նախկին պատգամաւոր Վարդան Վարդանեանի, Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ներկայացուցիչների, մասնակցելով Սպահանի Սէլէդ մզկիթում տեղի ունեցած Սպահանի նախկին ուրբաթօրեայ աղօթապետ այաթ. Թահերիի թաղման յաջորդ օրւայ հոգեհանգստեան արարողութեանը՝ իր յարգանքի տուրքը մատուցեց 87-ամեայ հոգեւորականի յիշատակին: Բազմամարդ այս արարողութեանը ներկայ էին նաեւ երկրի նախկին եւ ներկայ նախարարներից, խորհրդարանի պատգամաւորներից, Սպահանի նահանգապետ Չաքեր Էսֆահանցի եւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Այաթ. Սէլէդ Չալալէդդին Թահերին Իրանի Իսլամական Յեղափոխութիւնից յետոյ եղել է Սպահանի առաջին ուրբաթօրեայ աղօթապետը եւ սոյն պարտականութիւնը շարունակել է մինչեւ իրանական 1381 թականը, երբ հրաժարել է նշած պաշտօնից: Նա իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում եւ դրանից յետոյ միշտ սերտ յարաբերութիւններ է պահպանել իրանահայութեան, ի մասնաւորի Սպահան քաղաքի հայութեան հետ եւ մշտապէս դրստանքով է արտայայտել հայերի մասին: Այաթ. Թահերին իր մահկանացուն է կնքել կիրակի, յունիսի 2-ին, շնչառութեան հետ կապած խնդիրների պատճառով:

Նորոգ հանգուցեալի յուղարկաւորութիւնը կատարել է երեքշաբթի՝ յունիսի 4-ին:



**ՈՒՐԱՆ ԺԱՄՆԵՅ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՅԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ**



եւ հիւրեր: Մթնոլորտը ջերմացնում էր «Անի» նազախումբն իր կենսախինքը եւ աշխուժ երգերով:

Որպէս հանդիսավար՝ Հայրուկ Վարդեանեանն օրն առաւել անմոռանալի եւ գեղեցիկ էր դարձնում իր հումորներով:



Հինգշաբթի՝ 23 մայիսի 2013 թականի երեկոյեան ժամը 5-ին, Նոր Զուղայի Հայոց Ազգային Ծերանոցում, կազմակերպութեամբ Հայ Կանանց Գթութեան Միութեան Վարչութեան, տեղի ունեցաւ ուրախ ժամանց՝ Համբարձման Տօնի առթիւ: Տօնախմբութեանը մասնակցում էին Միութեան անդամուհիները, ծերանոցում բնակող տարեցները, ծերանոցի աշխատակազմը

Ծրագրում նախատեսւած էր նաեւ ազատ բեմ, որի ընթացքում ներկաներից իւրաքանչիւրը ցանկութեան



ղէպքում կարող էր ասմունքով կամ երգով ելոյթ ունենալ: ժուլիթ Դաթեանը եւ Այդա Խուդաբախշեանն ասմունքեցին, իսկ իրենց քաղցր ծայցներով երգեցին՝ Արաքս Տէր Մարտիրոսեանը, Համաս Մարգարեանը, Ժանիթ Այազեանը եւ Գէորգ Քեշիշեանը:

Միութեան Վարչութեան կողմից կազմակերպւել էր մրցութիւն, որն առաւել խանդավառութիւն ստեղծեց ներկաների մօտ:

Վարչութիւնը նախատեսել էր նաեւ համեստ եւ փոքրիկ հիւրասիրութիւն:

Իրօք, որ Ծերանոցի այդ ջերմ ու գեղեցիկ բակում, որտեղ ճաշակով դասաւորած էր գունաւոր սեղաններ եւ աթոռներ, վարդերի բուրմունքի հետ ձուլւած, բոլբոլները շատ արագ էին անցնում, այդուամենայնիւ իւրաբանչիւր բոլբոլ մի յուշ դարձաւ ներկաների համար:



**ՅԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԸ  
«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ  
ՅԱՐԿԻ ՏԱԿ**

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Երէցների Միաւորի Վարչութիւնը, նպատակ ունենալով՝ պահպանել հայկական աւանդական ծէսերն ու սովորութիւնները եւ այն անաղարտ ձեւով փոխանցել նոր սերնդին, նաեւ այն հանգամանքը, որ հայ համայնքի զգալի մասը աշխատանքի կամ կենցաղային այլ պատճառներով հնարաւորութիւն չի ունենում Համբարձման օրը համաձայն հայկական աւանդութեան անց կացնել բնութեան գրկում, օրւայ առթիւ Միութեան յարկի տակ կազմակերպում է տօնահանդէս՝ միասնաբար նշելու Յիսուս Քրիստոսի Ս. Համբարձման Տօնը եւ օրը դարձնել տօնական ու անմոռանալի:



Որպէս այդպիսին, հինգշաբթի՝ 2013 թականի մայիսի 9-ի երեկոյեան Ս. Համբարձման Տօնի առթիւ կազմակերպւած ծրագիրն սկսեց «Անուշ» օպերայի Համբարձման Տօնի ծիսակատարութիւնները նկարագրող հատուածի ցուցադրումով, որից յետոյ Միաւորի անդամուհի Հռիփսիկ Սիմոնեանը Միաւորի կողմից ներկայացրած ողջոյնի խօսքում շնորհաւորեց մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Համբարձման Տօնը եւ նրան զուգադիպած մայիսեան յաղթանակներից Ծուշիի ազատագրման 21-ամեակը, եւ օրւայ խորհրդի առթիւ բացատրութիւն փոխանցեց ներկաներին:

Հանդիսութիւնը յատկանշուում էր աւանդական «Ջան գիլում» բախտախաղով: Այն սիրոյ, երջանիկ ամուսնութեան եւ հարստութեան հասնելու աւանդական վիճակախաղ է, որը որպէս գեղեցիկ աւանդութիւնների պահպանում կատարեց կարասի մէջ տեղադրած «Ջան գիլումի» վարդերով զարդարւած քառեակների վաճառումով, Միաւորի տարագաւոր անդամուհու միջոցով: Վաճառքին մաս էին կազմում նաեւ ծաղիկներով պատրաստած թագեր, ներկւած ձու, հրուշակ, աւանակական գաթա, աւանդական ճաշեր եւ այլ ուտեստներ, որոնց պատրաստելու համար համագործակցութիւն էին ցուցաբերել Միաւորի ամբողջ անդամ-ուհիները: Նախատեսւել էր նաեւ խաղերի տաղաւար:

Նշելի էր, որ ստեղծւած տօնական տրամադրութիւնը, Միաւորի անդամ-ուհիների ամբողջ կազմի միասնական աշխատանքի արդիւնք էր եւ հսկայական աշխատանք էր պահանջւել՝ այն իրականացնելու համար: Ցանկալի էր, որ մեծ թւով հանդիսականներ վայելէին այն:

### ՋԱԿԱՒԻՆ ԵՒ ՋԱԿԱՒԻՔԱՂՎՅՈՒԹԵԱՆԸ ՆԻՐԻՎԾ ԴԵՆՏԱԿԱՆԻՆ

Ուրբաթ՝ յունիսի 28-ի երեկոյեան, Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջափակում, նախաձեռնութեամբ Ն.Ձ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, տեղի ունեցաւ աւանդոյթ դարձած դաշտահանդէսը՝ նիրուած Ջաւախքին եւ ջաւախքահայութեանը: Բարեգործական Ընկերութիւնն իր հայրենանպաստ աշխատանքների շարանում 2002 թականից կազմակերպում է դաշտահանդէս, որի ամբողջ հասոյթը յատկացնում է Ջաւախքին օժանդակելու ֆոնդին:



Ինչպէս նախորդ տարիները, այս տարի եւս անակընկալներով լի դաշտահանդէսը մեծ խանդավառութիւն առաջացրեց ներկաների, ի մասնաւորի երեխաների մօտ, սկսած անուշաբոյր ուտեստներից մինչեւ վիճակախաղը եւ բազմատեսակ այլ խաղեր, որոնցով զւարճացան բոլորը:



Շրջափակում տեղադրուած կրպակների շարանում ուշագրաւ էին յատկապէս մանկական բիլիարդի, թեփախաղի, նշանառութեան ու սլաքախաղի բաժինները եւ Ջաւախքի խորհրդանշով իրերի վաճառման կրպակը: Իսկ այս տարի մի յատուկ տեղ էր զբաղեցրել լուսանկարման բաժինը, որտեղ իւրաքանչիւրն առիթ ունեցաւ ջաւախքահայութեան տարագով զգեստաւորուած աղջկայ եւ տղայի հետ լուսանկարելու: Աւանդոյթի համաձայն տեղադրել էր նաեւ նիրահաւաքի կրպակ, որտեղ հաւաքագրուած էին նիրատուների նի-

թական օժանդակութիւնները:



Ծրագրի ընթացքում հաղորդավար Վեհանուշ Խուրաբախչեանը հանդէս եկաւ ողջոյնի խօսքով, որից յետոյ ներկաներին մի շարք տեղեկութիւններ փոխանցեց դաշտահանդէսի կազմակերպման մասին:

Այնուհետեւ Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամներից Վանիա Պետրոսեանը, Նարեգա Սիմոնեանը եւ Վանէ Շահնազարեանն ընթերցեցին օրան պատշաճ հետաքրքիր խօսքեր եւ Ջաւախքի պատմական անցեալին վերաբերող ճիւթեր:



Երեկոյի շարունակութեան մէջ մթնոլորտն առաւել ջերմացաւ ուրախ երգերի շարանով՝ երգիչ Արթին Ղարախանեանի կատարմամբ եւ Արգին Ղարախանեանի նազակցութեամբ:



Յատկանշական է, որ սոյն ծրագրի կազմակերպման գործում Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հետ համագործակցել էին Ն.Ձ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութիւնը եւ երգիչ Արթին Ղարախանեանը:

**ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 98-ԱՄԵԱԿԻՆ ՆԻԻՐԻԱԾ  
ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՅԹ**

**Ն.Ջ. Հայոց Ազգային  
«Քանանեան» աղջկանց  
դպրոցի միջնակարգի օղակի  
երրորդ դասարանի  
աշակերտուհիների  
մասնակցութեամբ**

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայոց Ազգային «Քանանեան» ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի, մայիսի 10-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեանը նիրաձ աւանդոյթ դարձած ճարտասանութեան մրցոյթը՝ դպրոցի միջնակարգի օղակի երրորդ դասարանի աշակերտուհիների մասնակցութեամբ, նպատակ ունենալով նոր սերնդին խթանելու եւ խրախուսելու հայոց լեզվի, գրականութեան, պատմութեան եւ մշակոյթի առաւել իմացութեանը: Մրցոյթին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի եւ Հայոց Յեղասպանութեան 98-ամեակի Ոգեկոչման Նոր Զուղայի Յանձնախմբի ներկայացուցիչներ, հայոց ազգային դպրոցների ուսուցիչներ եւ մասնակիցների ծնողներ:

ամեակի առթիւ՝ այսպէս շարունակեց. «Յաղթանակների ուղին արժանաբար շարունակողները պէտք է լինենք մենք՝ գիւնելով գիտութեան գէնքով: Խօսքի, գիտութեան եւ մտքի առաջին դաշտը համարուում է դպրոցը, որի առաջամարտիկներն են հայ ուսուցիչները»: Նա իր խօսքի շարունակութեան մէջ բացատրեց աշակերտների կողմից նիւթերի ընտրութեան եւ ուսումնասիրութեան ընթացքն ու մրցոյթի կանոնները:



Որպէս իրաւարար կազմի անդամներ, աշակերտների ելոյթները գնահատում էին «Քանանեան» դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը եւ հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցիչներ Քարոլին եւ Սեդա Դիլանջեանները:

Այնուհետեւ մասնակիցներից իւրաքանչիւրը 5 րոպէի սահմանում ելոյթ ունեցաւ իր նախընտրած թեմայի շուրջ վիճակահանութեամբ ճշտաւած հետեւեալ հերթականութեամբ.



Սկզբում բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր Մարտիրոսեանը, որը շնորհաւորելով Շուշիի ազատագրման 21-



Արիա Պօղոսեան՝ «Կոմիտասի կեանքը եւ գործունէութիւնը», Անասիկ Կիրակոսեան՝ «Անիի ճարտարապետութիւնը», Արիգա Յարութիւնեան՝ «Սայաթ Նովա», Թենի Մկրտչեան՝ «Երաժշտութիւն», Անի Յակոբեան՝ «Հայոց Առաքելական եկեղեցիները», Նելինէ Մինասեան՝ «Հայկական պար», Փարելի Թահմազեան՝ «Յեղասպանութիւն», Շաքէ Վարդումեան՝ «Հայ անանի մարզիկները», Շաղիկ Մկրտչեան՝ «Ատրպատականի վանքերը», Արմինէ Առաքելեան՝ «Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցները», Անի Տէր Յովհաննի-



սեան՝ «Հայաստանի հին մայրաքաղաքներից Անի և Դիլիջ», Արիգա Ծառուրեան՝ «Հայկական հին տարազներ», Սարա Ներսիսեան՝ «Ձեր կեանքի իմաստը հենց դուք էք կերտում», Ռոմին Ներսիսեան՝ «Խաչքարի փորագրության արեստ», Անի Բարումեան՝ «Ազգային Գրականություն», Անասիկ Կարապետեան՝ «Սասնայ ծոեր էպոսը», Մարալ Ղարիբեան՝ «Հին աստածներ», Բարելի Ալազբալեան՝ «Վիկտոր Համբարձումեանը», Անասիկ Ծառուկեան՝ «Նեմրուց լեռը» և Սեդրի Ղուկասեան՝ «Եփրեմ Խան»:



Յատկանշական է, որ մասնակիցներից ոմանք նիւթն աւելի դիրքըմբռնելի դարձնելու նպատակով, իրենց ելոյթին զուգահեռ պատատի վրայ ցուցադրում էին համապատասխան պատկերներ:

Մրցոյթի ամբողջ ընթացքում, որն անցաւ մէկ ակնթարթում, մասնակիցներն իրենց ճարտար լեզուով ոչ միայն հանդիսատեսին մատուցեցին բազմաթիւ գիտելիքներ՝ հայկական մշակոյթի տարբեր ոլորտների և արժանաւոր հայորդիների առնչութեամբ, այլև նրանց մտովի տարան դէպի Հայրենիք:

Ելոյթների աւարտին, նախքան ճարտասանութեան մրցոյթի արդիւնքների ամփոփումը, Հայոց Յեղասպանութեան 98-րդ Տարելիցի Ոգեկոչման Նոր Զուղայի Յանձնախմբի կողմից յայտարարուած «Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը» նիւթով շարադրութեան մրցոյթին մասնակցած «Քանանեան» դպրոցի 21 աշակերտուհիներն ստացան Ոգեկոչ-

ման Յանձնախմբի գնահատագրերը՝ ձեռամբ Յանձնախմբի և Կրթական Խորհրդի ներկայացուցիչների ու «Քանանեան» դպրոցի հայերէն աւարկաներ դասաւանդող ուսուցչուհիների, իսկ լաւագոյն գրութիւնները ներկայացնող աշակերտուհիները պարգեատրուեցին Կրթական Խորհրդի կողմից նախատեսուած յուշանւերներով: Թէև ուսուցիչների վկայութեամբ բոլոր շարադրութիւնները ցնցող էին և ունէին բարձր մակարդակ, սակայն արդիւնքի համաձայն ուղեցոյցի բաժնից լաւագոյն էին ճանաչել՝ Լիլիան Ասատրեանի, Լիլիթ Հայրապետեանի և Զարինէ Ղարիբեանի, իսկ միջնակարգի բաժնից՝ Վանա Ծիրանեանի, Նազէ Ասատրեանի, Թանիա Մինասեանի և Նարէ Վարդանեանի գրութիւնները:



Վերջապէս հասաւ ճարտասանութեան մրցոյթի արդիւնքի ամփոփման պահը, որի կապակցութեամբ իրաւարար կազմի կողմից արտայայտուեց ուսուցչուհի Քատուլին Դիլանչեանը՝ ասելով, որ այսօրը լինելու է աշակերտների կեանքի լաւագոյն էջերից մէկը և այս փորձն օգնելու է նրանց՝ հետագայում աւելի մեծ լսարանների առջեւ արտայայտուելու և ելոյթ ունենալու համար: Նա աւելացրեց նաեւ, որ արդիւնքների ամփոփման համար նկատի են առնել մասնակիցների պատրաստածութիւնը, նիւթին տիրապետումն ու ներկայացուած խօսքի կառոյցը:



Այնուհետև Կրթական Խորհրդի ու Հայոց Յեղասպանութեան 98-ամեակի Ոգեկոչման Նոր Զուղայի Յանձնախմբի ներկայացուցիչների և ուսուցիչների միջոցով Ոգեկոչման Յանձնախմբի պատրաստած գնահատագրերը շնորհուեցին բոլոր մասնակիցներին, իսկ յատուկ մրցանակներ՝ մրցոյթի լաւագոյններին: Արդիւնքի համաձայն

Շարունակութիւնը՝ 18-րդ էջում

### ԳԻՏԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ԲԱՆԱՆԵԱՆ» ԴԴՐՈՑՈՒՄ

Նախաձեռնությամբ Նոր Զուղայի Հայոց Ազգային «Քանանեան» աղջկանց դպրոցի տեսչության, 12 յունիս 2013 թականի առաւօտեան ժամը 8:30-ից, դպրոցի միջնակարգ օղակի աշակերտութեան մասնակցութեամբ տեղի ունեցաւ ֆիզիկայի եւ քիմիայի երկրորդ գիտական ճամբարը: Ծրագրին ներկայ էին Կրթա-դաստիարակչութեան կողմից նշանակած հսկիչները, Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ներկայացուցիչները, դպրոցի ուսուցիչները եւ աշակերտների ծնողները:



Դպրոցի գրադարանավարուհի Կարին Տէր Մարտիրոսեանը ողջունելով ներկաներին, բացատրեց գիտական ճամբարի կազմակերպման նպատակները եւ տարած աշխատանքները, նշելով որ այս ճամբարն իր տեսակի մէջ երկրորդ անգամն է կազմակերպուած սոյն դպրոցում, որպէսզի դրանով աշակերտների համար ստեղծուին հնարատրութիւն՝ դասապահների ընթացքում ձեռք բերած տարբեր գիտելիքները գործնականի վերածելու, նաեւ սովորելու ճիշտ ուսումնասիրութիւններ կատարելու ձեւերը:



Սկզբում, մէկ ժամ տեսողութեամբ, առաջին միջնակարգի աշակերտները բաժանելով 4 խմբերի, ստացան համապատասխան տարրալուծարանի գոյքեր եւ նիւթեր ու զբաղւեցին քիմիայի եւ ֆիզիկայի քանի փորձերով: Դահլիճում ներկաներն էւս հնարատրու-

թիւն գտան մօտենալու եւ աշակերտների միջոցով լսելու բացատրութիւններ եւ դիտելու կատարուող աշխատանքները:



Առաջին բաժնի աւարտին, ներկաներն իջան «Ալեկունոշ Տէրեան» դահլիճ, ուր Կարին Տէր Մարտիրոսեանը բացատրեց, որ «Կազմակերպւած գիտական երկու ճամբարներից զատ, այս տարեշրջանում դպրոցում կազմել են գիտական ուսումնասիրութիւնների խմբեր՝ քիմիայի, ֆիզիկայի եւ կենսաբանութեան բնագաւառներում, որոնք մէկ տարի շարունակ զբաղւել են տարբեր ուսումնասիրութիւններով»: Ապա կազմւած խմբերից աշակերտները ներկայացրեցին մի շարք ընդհանրութիւններ եւ երկու կոնֆրանսներ՝ մարդու ուղեղի եւ առօրեայ օգտագործող ուտեստների, ըմպելիքների, ջրի ու այլ նիւթերի քիմիական բաղադրիչների դրական ու բացասական ազդեցութիւնները մարդու օրգանիզմի վրայ:



Արտայայտեց դպրոցի տեսչուհի՝ տկն. Սալաուի-ֆառը, ով յայտնեց թէ՛ «Դպրոցի աշխատակազմն ընթացք տալով Կրթա-դաստիարակչութեան շրջաբերականին, եղաւ առաջնատար դպրոցներից, որը կազմեց գիտական ուսումնասիրութիւնների խմբեր, նաեւ աշակերտութեան գիտական մակարդակը բարձրացնելու եւ իւրացրած դասերը գործնականի վերածելու նպատակով եղաւ նախաձեռնողը գիտական ճամբար-

ների կազմակերպման, աւելացնելով որ դպրոցը սոյն տարեշրջանում արժանացել է նահանգի լավագոյն դպրոցների առաջին կարգի կոչմանը»:

Ներկայացուցեցին գիտական ուսումնասիրութիւնների համար կազմած խմբերի դասատուները, որոնք եղել են աշակերտութեան կողքին, փոխանցելով արժէքատու գիտելիքներ: Սոյն խմբերին առիթ է ընձեռնել մասնակցելու տարրալուծարանային մրցոյթների եւ արձանագրել յաղթանակներ: Դասատուներն են եղել տկնք. Նաբիանն ու Հատաթին եւ «Քանանեան» դպրոցի շրջանաւարտ՝ Սինէ Մինասեանը, ովքեր եւս արտայայտեցին եւ յայտնեցին իրենց շնորհակալութիւնը թէ՛ աշակերտութեանը եւ թէ՛ դպրոցի անձնակազմին՝ իրենց համագործակցութեան եւ տրամադրած բոլոր հնարաւորութիւնների համար:

Այս բոլոր ներկաները բարձրացան կենտրոնական դահլիճ, որտեղ երկրորդ եւ երրորդ միջնակարգի աշակերտները կատարեցին նախատեսւած փորձերը:

Արտայայտեց Կրթական Խորհրդի ատենապետ՝

պրն. Զանսոն Աղաբաբայեանը, ով շնորհաւորելով սոյն նախաձեռնութեան կապակցութեամբ, աշակերտներին յորդորեց միշտ զբաղել տարբեր ուսումնասիրութիւններով ու իրենց կեանքի եւ ուսման համար ունեցաւ ծրագրաւորում, որի շնորհիւ հասնելու են բարձրունքների:

Կրթա-դաստիարակչութեան ներկայացուցիչները հարցումներ ուղեցին աշակերտներին ու դասատուներին եւ աւարտին բարձր գնահատեցին այս գեղեցիկ նախաձեռնութիւնը:

Չորս ժամ տեսողութեամբ գիտական այս ճամբարն առիթ ընձեռնեց շփելու նաեւ աշակերտների ծնողների հետ եւ լսելու նրանց տեսակէտներն ու շինիչ առաջարկները, ովքեր եւս իրենց հերթին յայտնեցին շնորհակալական խօսքեր եւ գիտական այս ճամբարը համարեցին լաւագոյն առիթներից՝ աշակերտների յառաջդիմութեան եւ բարձրագոյն ուսման տարբեր ճիւղերի ճանաչողութեան համար:

Ծրագրի ընթացքում ներկաները հիւրասիրեցին դպրոցի Ծնողական Խորհրդի միջոցով:



**Շարունակութիւն՝ 16-րդ էջից**

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ 98-ԱՄԵԱԿԻՆ ՆԵՒՐԻԱԾ...**

առաջին կարգ հանդիսացաւ Մեղրի Ղուկասեանը, երկրորդ կարգ՝ Արիգա Յարութիւնեանը, Մարալ Ղարիբեանն ու Անի Տէր Յովհաննիսեանը, իսկ երրորդ կարգ՝ Թեմի Բաղդամեանը եւ Անասիկ Ծառուկեանը:



Հարկ է նշել նաեւ, որ Կրթական Խորհրդի կողմից պարգեւատրեց Անասիկ Կարապետեանը:

Գնահատագրերի բաշխման արարողութեան ընթացքում Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան անունից դիպլոմներ շնորհեցին սոյն Նախարարութեան կողմից կազմակերպուած «Հայոց Յեղասպանութեան 100-ամեակը» նիւթով շարադրութեան մրցոյթում առաջին կարգ հանդիսացած Շաղիկ Մատթէոսեանին եւ երկրորդ կարգի արժանացած Մեղրի Ղուկասեանին:

Վերջում Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանն առիթը պատեն համարելով՝ շնորհաւորանքի խօսք ուղղեց մայիսեան յաղթանակների՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան կերտման եւ Շուշիի ազատագրման կապակցութեամբ եւ բարձր գնահատելով բոլոր մասնակիցների ելոյթները՝ ասաց. «Ճարտասանութիւնը բարուք խօսելու արւեստ է, որն իր մէջ պարունակում է երեք առանցքներ՝ վայելչութիւն, գորութիւն եւ ճշմարիտ խօսք: Այսօր դուք օգտւելով այդ առանցքներից արտադրեցիք հզօր եւ վճռական մտքեր»: Նա վերջում յատուկ շնորհակալական խօսք ուղղեց ուսուցչուհիներին՝ իրենց կատարած տքնաջան աշխատանքի եւ նման միջոցառումների կազմակերպման համար:

**ՄԱՍԿԵՐՑԻ ՀԱՆԿԱՍԿՈՐ ՄԵԾՈՑԱԿԱՆԱՔ ԱՄՐՈՒՄ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՐՈՑԻ ՅԱԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՈՂՈՂԱԾ 2012-2013 ՈՒՍՈՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒՄԸ**

Չորեքշաբթի՝ 2013 թվականի յունիսի 19-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, տեղի ունեցաւ «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի ամավերջի հանդիսութիւնը:

դուրսիւններ:



Ապա հաղորդավարութեամբ հանդէս եկաւ ուսուցչուհի Կարինէ Մինասեանը, որը նույնպէս ողջունելով ներկաներին՝ բեմ հրաւիրեց դպրոցի տեսչուհի տկն. Սալաոիֆարին՝ օրւայ առթիւ արտայայտելու: Տեսչուհին շնորհակալութիւն յայտնելով ուսուցիչներին, ծնողներին եւ աշակերտութեանը՝ իրենց կատարած անխոնջ աշխատանքի եւ անսահման համբերատարութեան համար, անդրադարձաւ անցնող ուսումնական տարեշրջանի ընթացքում «Քանանեան» դպրոցի արձանագրած բազմաթիւ յաջողութիւններին:



Ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանը, հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները եւ «Քանանեան» դպրոցի տեսչութիւնը, ուսուցչական կազմը, աշակերտուհիները ու ծնողները:



Տեսչուհին տեղեկացնելով, որ Ուսումնա-դաստիարակչութեան Նախարարութեան կողմից կազմակերպւած «Լաւագոյն դպրոց» անւանակարգի ծրագրի շրջանակում, «Քանանեան» դպրոցն Ուսումնա-դաստիարակչութեան Հիմնարկի 3-րդ շրջանում զբաղեցրել է առաջին պատուաւոր տեղը, իսկ նահանգի մակարդակում յայտնել է 8 լաւագոյն դպրոցների շարքում, շնորհաւորեց սոյն բացառիկ յաջողութեան կապակցութեամբ: Տկն. Սալաոիֆարն առաձնաբար նշեց նաեւ դպրոցի միջոցով իրագործւած բոլոր ծրագրերն ու նորարարութիւնները՝ աշակերտների գիտական մակարդակի բարձրացման ուղղութեամբ: Տեսչուհին իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնելով Կրթական Խորհրդին, դպրոցի ուսուցիչներին եւ անձնակազմին, ծնողներին ու աշակերտութեանը, յատուկ գնահատանքի խօսք ուղղեց դպրոցի տեսչութեանը,



Սկզբում դպրոցի փոխ-տեսչուհի տկն. Ռիմա Սիմոնեանը նշելով, որ «Ով ինչ ցանի այն էլ կը հնձի», ողջունեց ներկաներին եւ շնորհակալական խօսք ուղղեց բոլոր այն անհատներին, որոնց օժանդակութիւնների եւ տքնաջան աշխատանքների շնորհիւ «Քանանեան» դպրոցը նւանել է յաղթանակներ եւ բազմազան յաջո-

որին միացան ներկաները՝ յոտնկայս բուռն ծափող-ջղկներով:



Այնուհետև աշակերտուհիներ Նազէ Ասատրեանը, Մեղրի Ղուկասեանը, Ծաղիկ Մատթէոսեանը, Սարա Ներսիսեանը եւ Ռոժին Ներսիսեանը մանրամասնօրէն ներկայացրին գիտական ասպարէզում եւ աշակերտների զարգացման ուղղութեամբ իրականացած մի շարք աշխատանքներ, ինչպիսին են՝ «Խարազմի» փառատօնին եւ տարրալուծարանային մրցոյթներին մասնակցութիւնը, քիմիայի եւ կենսաբանութեան յանձնախմբերի գործունէութիւնը, «Ուսուցչի աջակից» ծրագրի կիրառումը եւ այլն:



Այնուհետև բեմ հրախրուեց դպրոցի Ծնողական Խորհրդի ներկայացուցիչ Մարգարիտ Դաթեանը՝ Խորհրդի խօսքը փոխանցելու: Նա նշելով, որ ազգերի



գոյատեւման պայմաններից է օրայ տեխնոլոգիայի

զրգացման հետ առաջ գնալը, դպրոցի արձանագրած յաջողութիւնը՝ նահանգի 8 լաւագոյն դպրոցների շարքում դասելը տեսչութեան տքնաջան աշխատանքի արդիւնք համարեց եւ դրա համար կարելորութեամբ ընդգծեց Կրթական Խորհրդի, ուսուցիչների, ծնողների եւ աշակերտութեան ունեցած դերակատարութիւնը: Ծնողական Խորհուրդն իր խօսքն ասարտեց շնորհատրանքի արտայայտութիւններով՝ դպրոցի յաջողութիւնների կապակցութեամբ:

Ծրագրի շարունակութեան մէջ Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանի, «Արմէն» տարրական համալիրի տեսուչ պրն. Վրէժ Ծիրանեանի եւ «Քանանեան» դպրոցի տեսչուհի տկն. Սալաոիֆարի, փոխ-տեսչուհի տկն. Ռիմա Սիմոնեանի եւ վերակացուհի տկն. Իռաւանիի միջոցով գնահատագրեր շնորհուեցին հայերէն ու պարսկերէն առարկաներում առաջին, երկրորդ եւ երրորդ կարգ հանդիսացած ու գերազանց աշակերտներին:



Սոյն արարողութիւնն ընդմիջեց Աշակերտական Խորհրդի ներկայացուցիչներ՝ Անդրիա Խաչատրեանի եւ Բարելի Այազբալեանի արտայայտութիւններով, որոնք հայերէն եւ պարսկերէն լեզուներով խորհրդի անունը երախտիքի խօսք ուղղեցին դպրոցի տեսչութեանը եւ ուսուցչական կազմին:



Ապա գնհատուեցին նաեւ տարեշրջանի ընթացքում դասերում յառաջադիմութիւն ցուցաբերած եւ մարզական յաջողութիւն արձանագրած աշակերտները, դպրոցին տարբեր բնագաւառներում օժանդակող շըր-

Շարունակութիւնը՝ 24-րդ էջում

**«ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻԱՆ» ԿԻՐԻԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԼԳՉԱՅԻՆ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ԴՊՐՈՅԻ ԿԱՄԱԶՆՈՒՄԻՌՈՒԹԵԱՐԲ**

Անսալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հռչակագրին՝ 2013 թվականին «Հայ Մօր Տարի» հռչակելու կապակցությամբ, Նոր Զուղայի Հայոց Ազգային «Կատարինեան» տղայոց ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի տեսչության եւ Ծնողական Խորհրդի նախաձեռնությամբ, մայիսի 5-ի երեկոյան ժամը 7-ին, Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» դահլիճում, տեղի ունեցաւ պատշաճ միջոցառում՝ նկրտած «Հայ Մօր Տարւան»: Միջոցառմանը ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, Սպահանի Պետական Համալսարանի Հայագիտական Ամբիոնի դասախօս դկտ. Սիլւա Ալլահվերդեանը եւ դպրոցի աշակերտութեան ծնողներ:

րում՝ նախագրեան, գրերի գիտի եւ ժամանակակից շրջաններում, նկարագրած հայ մօրը: Իր ելոյթի մի այլ բաժնում բանախօսը կարեւորելով 18-րդ եւ 19-րդ դարերի զինեալ պայքարին ժամանակակից բանաստեղծութիւնները, որտեղ հայ մօր կերպարն առաձնանում է, երբ նա իր զաւակին խարխուսում է զէնք վերցնել եւ Հայրենիքը պաշտպանել, այսպէս շարունակեց. *«Այդ ժամանակահատուածում հայ մօր առաքելութիւնը՝ Հայրենիքի պաշտպանութեան գաղափարի սնուցման միջոցով, աւելի վեհ առաքելութեան է վերածուում եւ մայրը վերածում է: Հայ մայրը պարտականութիւն է ունեցել ոչ միայն մեծացնելու իր երեխաներին, այլեւ նրանց սրտում ամրացնելու Հայրենիքի պահպանման գաղափարը»:*



Ծրագրի սկզբում ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկաւ օրւայ հաղորդավար Նայիրի Թահմազեանը, կարեւորութեամբ նշելով, որ չեն մեռնում այն ժողովուրդները, որոնց մայրերը գաղափարապաշտութիւն ունեն, գիտեն սիրել իրենց զաւակներին եւ նրանց հայրենասիրական ու մարդասիրական ուղու վրայ դնելով՝ հոգեւոր եւ մտաւոր արժէքները սովորեցնել գիտեն: Ապա նա ներկայացրեց օրւայ բանախօս դկտ. Սիլւա Ալլահվերդեանի կենսագրականը եւ բեմ հրաւիրեց նրան՝ արտայայտուելու:

Վերջում դկտ. Սիլւա Ալլահվերդեանն անդրադառնալով ժամանակակից շրջանին, կարեւորութեամբ մատնանշեց նաեւ Եղեռի տարիների գրականութեան էջերում նկարագրած հերոս, սակայն միեւնոյն ժամանակ ողբերկական ճակատագրի մատնւած հայ մօրը, ապա սփիւռքեան պայմաններում ծուլման վտանգի առջեւ կանգնած մայրերի առաքելութիւնը՝ աւելացնելով, որ հայ մայրերն առանձնայատուկ արարածներ են, ովքեր ի սկզբանէ պատմութեան բոլոր փուլերում պաշտպանել են մեզ տարբեր տեսակի վտանգներից:

Բովանդակալից բանախօսութիւնից յետոյ, «Կատարինեան» դպրոցի տեսչության, ուսուցչական կազ-



մի եւ Ծնողական Խորհրդի անունից յուշանւեր յանձնուեց դկտ. Սիլւա Ալլահվերդեանին:

րը դադարի աղօթելուց, այդ ընտանեկան յարկը ջերմութիւն չի գգայ: Այսօրայ աշխարհում շատ բան է վերապահւած մօրը, յատկապէս նա մեծ դեր ունի իր գաւակի դաստիարակման գործում: Եթէ մայրը գիտակից է՝ գաւակը նոյնպէս գիտակից է դառնում»:



Այնուհետեւ ծրագիրը շարունակուեց գեղարուեստական բաժնով, որտեղ մայր եւ հայրենիք թեմաներով երգերի ու ասմունքների կատարմամբ համայնքի շնորհալի երիտասարդներ ուրախութեամբ եւ յուզմունքով համակատարմամբ հանդէս եկան Մհեր Պօղոսեանը «Հայաստան» եւ «Մամա», Մանէ Թահմազեանը «Հայի աչքեր» եւ «Մայրիկ», Դաւիթ Թորոսեանը «Մարտիկի երգը» եւ Լալազէ Իսաղուլեանը «Հայաստան իմ չքնաղ» երգերով: Իսկ ընթացքում ասմունքեցին Վանանդ Իսաղուլեանը «Հայաստան» եւ Մարտունի Խաչիկեանը «Մօր մաղթանքը» բանաստեղծութիւնները:

Որպէս եզրափակիչ խօսք, արտայայտուեց արժն Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, ով մօրը մարդկային կեանքի ողնաշարը եւ սիւնն անանելով, մատնանշեց մայրերի առաքելութիւնը եւ Քրիստոսի մեծ սերն ու յարգանքը՝ Իր մօր նկատմամբ: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ասաց. «Մայրը տան ճրագն է, որն ամէն օր աղօթում է իր գաւակների համար: Եթէ մայ-



Արժն. Տէր Հայրը վերջում շնորհաւորեց Մայրերի Տօնը՝ Բարձրեալից ցանկանալով զօրութիւն, ուժ, կարողութիւն եւ աստուածային իմաստութիւն՝ մայրերի համար:

Միջոցառումն ավարտուեց հիւրասիրութեամբ:

### Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ԱՐՄԷՆ» ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱԻԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ



Կիրակի՝ 2013 թականի յունիսի 16-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, «Լինեթ կրթած, ստանանք բարձրագոյն ուսում» խորագրով տեղի ունեցաւ «Արմէն» տարրական դպրոցի վեցերորդ դասարանի աւարտական հանդիսութիւնը:

վատահ հաղորդավարներ՝ Նարբէլ Ղարիբեանը եւ Նայիրի Օհանեանը, ողջունելով բոլորին՝ ներկայացրին օրայ ծրագիրը, բացատրելով, որ այն իրագործել է վեցերորդ դասարանի հայերէն աւարկաներ դասաւանդող ուսուցչուհիներ Ժանետ Բաղումեանի եւ Ադրինէ Ստեփանեանի կազմակերպութեամբ եւ նոյն դասարանի աշակերտութեան կատարմամբ: Վարագոյրը բացելուն պէս, աշակերտներն երգեցին Տէրունական Աղօթքը՝ ինչպէս ամէն առաւօտ նախքան դասարան մուտք գործելը: Այնուհետեւ ասմունքեց Մանէ Յովսէփեանը, որից յետոյ իրենց քաղցր եւ գեղեցիկ ձայներով երգեցին Լուսիա Գալստեանը, Լուսիա Մատթէսեանը եւ Լիլիան Ալեքսանդրեանը՝ Վահան Տէրեանի «Կառուսել» երգը: Երգի պահին թիթեռնիկների պէս անհոգ եւ աշխոյժ իրենց գոյնզգոյն զգեստներով վալս էին պարում աղջիկները եւ տղաները:



Ծրագրին ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստեանեանը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ, «Արմէն» դպրոցի տեսչութիւնը, ուսուցչական կազմը, Ծնողական Խորհուրդը եւ աշակերտների ծնողները:



Սկզբում «Արմէն» տարրական դպրոցի տեսուչ արն. Վրէժ Ծիրանեանը ողջունելով ներկաներին՝ ընթերցեց դպրոցի միամեայ կրթա-մշակութային ու մարզական գործունէութեան զեկոյցը, որի աւարտին բարձրագոյն յաջողութիւններ մաղթեց շրջանաւարտներին:

Աշակերտական կատարումների աւարտին, խօսքերին եւ խմբական երգերին զուգընթաց Լուսին Մինասեանը մատների ճկուն շարժումներով աւագով նկարեց իրաբանչիւր հայի սրտում պահպանուած Մասիս սարերը եւ հայրենիքին կապուող պատանեկան զգացումներ, որի ամբողջ ընթացքը ցուցադրուեց պատաստի վրայ:

Այնուհետեւ փոքրիկ, բայց ինքնա-

Երգերից յետոյ տեղի ունեցաւ վկայականաբաշխման եւ մարզական յաջողութիւններ արձանագրած աշակերտների մեդալաբաշխման արարողութիւնները՝ ձեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալըս-



տանեանի, Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանի, դպրոցի տեսուչներ՝ օրդ. Լեոնթին Աբրահամեանի ու պրն. Վրէժ Թիրանեանի եւ պատկան ուսուցիչների: Աշակերտներն իրենց վկայականներն ստանալուց յետոյ երգեցին հրաժեշտի երգը, որի ընթացքում ցուցադրում էր տեսաժապաւէն՝ դպրոցում ունեցած վերջին պահերից:

Վերջում արժն. Տ. Մեսրոպ ա. քհնյ. Գալստանեանն իր պատգամն ուղղելով ներկաներին, ասաց. «Միրելի՛ աշակերտուհիներ, դուք այսօր հնձեցիք ձեր ցանած սերմերը: Դուք միշտ պէտք է լինէք կրթած եւ պէտք է ձգտէք բարձր վերելքների, եւ սա մի փոքրիկ հատուածն է ձեր ապագայ կեանքի: Միրելի՛ ծնողներ, շնորհաւորում եմ ձեզ. դուք դեռ վայելելու եւ ուրախանալու էք նրանց յաջո-

ղութիւնների համար»:



Յատկանշելի է, որ օրւայ ձեռնարկն իրականացնելու ուղղութեամբ պատկան ուսուցչուհիների կողքին աշխատել էին Մեղեդի Քալանթար-Օհանեանը՝ երգ-երաժշտութեան, եւ Անի Ասատրեանը՝ պարի բաժնիներում:

Վերջում ներկաները հիւրասիրուեցին Ծնողական Խորհրդի միջոցով:

**Շարունակութիւն՝ 20-րդ էջից**

**ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒՄԸ...**



ջանարատները եւ դպրոցի գրադարանի գրքերն ամենաշատն ընթերցող ուսուցիչը, ծնողը եւ աշակերտները: Յատուկ գնահատականի արժանացան հաշտապահական ճիւղի երկրորդ դասարանի աշակերտուհիները՝ համակարգչի դասարանի կարգն ու կանոնը բժախնդրօրէն պահապանելու համար:

Գնահատագրերի բաշխման բաժնին յաջորդեց Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանի խօսքը: Նա Խորհրդի անունից շնորհատրական խօսք ուղղելով դպրոցի բեղուն գործունէութեան համար՝ աշակերտներին մաղթեց գիտութեան բարձրունքների ու առաւել բարձր մակարդակների նախնում եւ ասաց. «Կրթման եւ դաստիարակման գործում նիւթական ներդրումների միջոցով նւագագոյն հնարւորութիւններն ենք կարող ստեղծել, իսկ նւիրւած եւ մարդկային բարձր արժէքներով օժտւած ուսուցիչներ ունենալը յաջողութիւններ արձանագրելու երաշխիքն է: Ուսուցիչը հասարակութեան զարգացման գրաւականն է»:

Ծրագրի շարունակութեան մէջ ճկուն եւ համաշափ շարժումներով ելոյթ ունեցաւ դպրոցի էլտրոփիկի խումբը, որից յետոյ պաստառի վրայ ցուցադրուեցին լուսանկարների շարան՝ անցնող ուսումնական տարւայ ընթացքում դպրոցում իրականացւած աշխատանքներից: Այնուհետեւ իրենց ջերմ ձայնով աշակերտուհիներ Վանա Թիրանեանը, Թանիա Մինասեանը, Փրենի Ղազարեանը եւ Արիգա Յարութիւնեանը կատարեցին հայրենասիրական մի երգ, որին որպէս ծրագրի եզրափակում՝ յաջորդեցին խմբական երգեր՝ դպրոցի աշակերտութեան կատարմամբ:

# ԱՄՎԵՐՁԻ ՀԱՆԴՐԱԿՈՐ ԶԵՒՆԱՐԿ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԳՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ

Գեղեցիկ ձեռնարկով Նոր Զուղայի Հայոց Ազգային Մանկապարտեզ-Նախակրթարանի սաներն եզրափակեցին 2012-2013 թուականների ուսումնական տարին:



Ծաբաթ՝ 2013 թուականի մայիսի 25-ի երեկոյան, Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցավ մանկական գեղեցիկ կատարումներով ողողած ամավերջի հանդեսը, որով դպրոցի սաները վարպետորէն հաշտութիւնն Գերկայացրին բոլորին՝ իրենց մէկ տարւայ հաճելի եւ արդիւնաւէտ աշխատանքից: Զեռնարկին Գերկայ էին՝ Սպահանի Հայոց թԹեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Զարեանը, Կրթական Խորհրդի եւ հայոց ազգային դպրոցների Գերկայացուցիչներ ու սաների հարազատներ:



Սկզբում բացման խօսքով ելոյթ ունեցավ դպրոցի տեսչուհի Քառուղին Դիլանջեանը, որտեղ նա կարեւորութեամբ անդրադարձաւ. «Դպրոցի անձնակազմը փորձել է մանուկների համար առաւելագոյն իմաստաւորել ուսումնական տարեշրջանը՝ նրանց տալով

բազմակողմանի դաստիարակութիւն: Դպրոցի աշխատանքների հիմնական առանցքներն են հանդիսացել մանուկների ուրախ եւ զւարթ մանկութեան ապահովումը, հասարակական հմտութիւնների ձեւաւորումը, զգացական ոլորտի կարգաւորումը, մտային կարողութիւնների բարձրացումը եւ հայրենասիրական զգացումների կերտումը, որոնց իրագործման համար կազմակերպել են դասապահներ, խաղեր, այցելութիւններ, հանդէսներ եւ այլ միջոցառումներ»: Բացման խօսքի աւարտին տեսչուհին բոլորին հարկիրեց դիտելու սաների Գերկայացումները՝ նկատելու հայ ազգի նշանաւոր յաղթանակներից՝ Հայաստանի առաջին անկախ Հանրապետութեան 95-ամեակին:

Տեսչուհու խօսքին յաջորդեցին աշակերտական Գերկայացումները: Սկզբում բեմը տրամադրեց դպրոցի փոքրիկ սաներին՝ Մանուշակագոյններին, ովքեր հանդէս եկան մարզական գեղեցիկ շարժումներով համադրած «Ծափիկ-ծափիկ» երգի կատարմամբ, ապա ժողովրդական մանկական երգերից կազմած մի փունջով՝ հայկական շունչ ու ոգի հաղորդեցին ծրագրին: Փոքրիկների կատարումներից յետոյ, ելոյթ ունեցան Մանկակատարեզի մեծ խմբակները՝ երկու Դեղինները, որտեղ աշակերտները մեղուների, զատիկների, գարնանային ամպերի, ծաղիկների, արեւի եւ զւարթ երեխաների կերպարներ ընդունած, գեղեցիկ արարով պատկերեցին գարնանային մի պայծառ օր անտառում: Այս Գերկայացման սկզբում միջատները եւ յորդառատ անձրեւ թափող ամպերը չաջողեցին ձմեռային քնից արթնացնել ծաղիկներին, մինչեւ եկաւ արեւը եւ իր շողերը տարածելով բոյսերի վրայ՝ արթնացրեց նրանց, եւ անտառը լցւեց ծաղիկների բոյրով: Վերջում անտառի բոյրը նոյնպէս գրաւեց ուրախ եւ աղմկոտ երեխաներին՝ խաղալու եւ զարճանալու համար: Սոյն Գերկայացումը իւրայատուկ էր, քանի որ իւրաքանչիւր կերպար ունէր իրեն համահունչ պարային շարժումներ ու արտայայտութիւններ: Դեղին խմբակ-

Ների սաներն իրենց ծրագիրն աւարտեցին գարնանն առնչող երգերի եւ ասմունքների կատարմամբ, իսկ որպէս եզրափակում՝ իրենց անհոգ օրրանին՝ Մանկապարտէզին, հրաժեշտ տւեցին «Մանկապարտէզ» յուզիչ երգով:



Աւանդոյթի համաձայն վերջում ելոյթ ունեցան նախակրթարանի աշակերտները, ովքեր բեմ ներս մտան համաշափ շարժումներով: Այնուհետեւ գեղեցիկ արտայայտութիւններով ու երգերով նրանք հանդիսատեսին բացայայտեցին այն եօթ հրաշալիքները, որոնց մասին գիտելիքներ ձեռք բերելով՝ կարողացել են ըմռնել հայրենասիրութիւնը, սէրն ու մարդկային բարձր արժէքները, իսկ ապագայում կարող են առաւել հեշտ ու դիւրին սերտել զանազան գիտելիքներ: Ըստ երեխաների իմաստուն խօսքերի՝ իրենց բացայայտած հրաշալիքներն էին՝ այլութենը, հայերէնը, գիրքը, մայրը, հայրենիքը, հայը եւ դպրոցը: Սոյն ներկայացումը աւարտւեց «Հրաժեշտ այրենարանին» երգով:



Աշակերտական ելոյթներին յաջորդեց Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանի խօսքը: Նա իր ուրախութիւնը յայտնելով կրթական համակարգի ամենակրտսէր աշակերտների ուսումնական տարեշրջանի յաջող աւարտի կապակցութեամբ, դուատանքի խօսք ուղղեց դպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին եւ Ծնողական Խորհրդին՝ իրենց կատարած աշխատանքների համար եւ աւելացրեց, որ հնարաւորինս կատարոււմ է, որպէսզի աշակերտների ուսման եւ դաստիարակման համար կիրաւուեն ամենաարդիական միջոցները եւ նրանք կարողանան յաջողութեամբ աւարտել

իրենց ուսումը:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի ձեռամբ եւ պրն. Աղաբաբայեանի, դպրոցի տեսչուհի Քատոլին Դիլանջեանի ու իւրաքանչիւր դասարանի պատկան ուսուցչուհու միջոցով, առանձնաբար տեղի ունեցաւ վկայագրերի բախշման արարողութիւնը:



Վերջում որպէս աւարտական հանդէսի եզրափակում, ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը, որտեղ կարեւորութեամբ անդրադառնալով երեխաների գեղեցիկ արտայայտութիւնների՝ շեշտեց, որ մեր երեխաները միայն հայոց դպրոցում են կարող ապրել, շնչել, մեծանալ եւ հասակ առնել: Սրբազան Հայրն իր պատգամի շարունակութեան մէջ գնահատանքի խօսք ուղղելով դպրոցի անձնակազմին եւ Ծնողական Խորհրդին՝ այսպէս աւարտեց. *«Մեր երեխաները հրաշքներ են եւ վաղը հրաշքներ պիտի գործեն մեր ազգային ու եղեղեցական կեանքում: Եթէ ուզում ենք վաղը առողջ սերունդ ունենայ, եթէ ուզում ենք վաղը պայքարող եւ պահանջատէր սերունդ ունենայ, մեր երեխաներին հայ դպրոցի մէջ պէտք է մեծացնենք»:*

ՅԶ ՄԱԷ 1-Ա

ի սյնի շին շ ձած Ա Յ Օ

Բ շ Ճ Ա Ս Բ շ Ճ ձ ա Օ

Նախաձեռնությամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Ծափնշահրի Մասնաճիւղի Երէցների Միաւորի, հինգշաբթի՝ 2013 թւականի մայիսի 1-ին, Ծափնշահրի Հայոց Ազգային «Արբոց Վարդանանց» դպրոցի սրահում, մեծ հանդիսությամբ տօնեց «Աշխատաւորների Համաշխարհային Օր»-ը: Սոյն ծրագրին ներկայ էին Ծափնշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները եւ բազմաթիւ աշխատաւոր հրաւիրեալներ:

Ծրագրի բացումը կարտարեց տկն. Արմիկ Թորոսեանի միջոցով: Նա բարի գալստեան խօսքեր ուղղեց ներկաներին եւ շնորհաւորելով աշխատաւորներին օրայ կապակցութեամբ, նշեց, որ մայիս 1-ը տօնում են 142 երկրներ՝ սկսած 1890 թւականից, ապա շարունակելով՝ ասաց. «Այս օրը մեր ժողովուրդն եւս աւանդաբար տօնում է, իր վերաբերմունքն արտայայտելով աշխատանքի եւ աշխատաւորի հանդէպ: Մենք լաւ գիտենք աշխատանքի գինը, քանի որ դարեր շարունակ սեփական ձեռքերով ենք կառուցել մեր տունը, շէնացրել հայրենի հողն ու կերտել մեր ապագան»: Ապա խօսքը փոխանցեց Ծափնշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանին օրայ առիթով արտայայտելու: Հոգշ. Հայր Սուրբն եւս իր հերթին շնորհաւորեց բոլոր աշխատաւորներին, թէ կին եւ թէ մարդ, նշելով աշխատանքի կարեւոր դերը մեր այսօրայ կեանքի մէջ: Նա շեշտելով, որ աշխատելու կարողութիւնը Աստուծո կողմից մարդուն տրւած շնորհք եւ միաժամանակ պարտականութիւն է, որով մարդը կարողանում է հանդիսանալ իբրեւ ստեղծագործ եւ կառուցող էակ, բոլոր հայ աշխատաւորներին մաղթեց ուժ եւ կորով, որպէսզի արդար աշխատանքով եւ ճակատի քրտինքով կարողանան իրենց օրայ հացը վաստակել:

Այնուհետեւ բեմը տրամադրեց տա-

ղանդաւոր երիտասարդներ Մարտիկին եւ Սեպուհին, ովքեր իրենց ուրախ երգ-երաժշտութեամբ պարի, ուրախութեան եւ զարճանալու հրաւիրեցին ներկաներին:



Առաւել աշխուժութիւն ստեղծելու նպատակով Երէցների Միաւորի կողմից կազմակերպւել էին ֆիզիքական մրցութիւններ, որոնց մասնակցեցին ներկաները: Միաւորի միջոցով պատրաստուած համով ուտեստները նաեւ ընթրիքի ժամին մատուցեցին ներկաներին:



Բ ձ ա շ յ յ շ Ս ձ ա Օ Ա Յ Օ Ս Ծ շ Օ շ շ ձ Օ Օ շ Ս յ յ Ս Մ Է շ շ Ա Յ Օ

Երեքշաբթի՝ 2013 թւականի մայիսի 14-ի առաւօտեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Ծափնշահրի Մասնաճիւղի Երէցների Միաւորի նախաձեռնությամբ կազմակերպւել էր շրջապտոյտ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Համբարձման տօնի առիթով:



Շրջագայութեանը մասնակցել էին թուով 25 կանայք, ովքեր իրենց տօնական տրամադրութիւնը բնութեան գրկում զարգացնելու համար նախ այցելեցին Սպահանի Ծաղիկների Այգի, ապա օրն անցկացրեցին Սպահանի Զայանդեռուդ գետի ափին գտնուող Նաժուան զբօսայգիում:

Միաւորի կարգադրութեամբ կազմակերպւել էին Համբարձման տօնի աւանդական խաղեր եւ ուրախ ժամանցի զբաղմունքներ, որոնցով աւելի հաճելի դարձաւ շրջապտոյտը:

# ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱԿՕՏ» ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԻԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Հինգշաբթի՝ 2013 թականի մայիսի 16-ի երեկոյեան, Ծահինշահի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում իր տարեկան համերգը ներկայացրեց Ծահինշահի «Նարոտ» մանկապատանեկան երգչախումբը՝ ղեկավարութեամբ Ծահինշահի հոգետր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի:



Համերգին իրենց ներկայութեամբ՝ պատուէ էին թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծահինշահի հոգետր հովիւ արժ. Տ. Վարդան քինչ. Աղաբաբայեանը, Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները, Ծահինշահի Հայ Համայնքի Վարչութեան անդամներն ու պատգամաւորները եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

«Նարոտ» մանկապատանեկան երգչախումբն արդէն երկու տարեկան է, թուով 50 պատանիներից կազմւած, ունեցել է տարբեր առիթներով համերգներ եւ իրենց երգեցողութեամբ ոգետրել բոլորին:



Ձեռնարկի բացումը կատարեց երգչախմբի անդամուհի Նարինէ Բաբումեանը՝ բովանդակալից խօսք ներկայացնելով մանուկների եւ երաժշտութեան փոխ-յարաբերութեան վերաբերեալ, նշելով երաժշ-

տութեան ազդեցութիւնը երեխայի մտքի, երեակայութեան եւ ստեղծագործական ունակութիւնների վրայ, որը նպաստում է նրա գեղագիտական դաստիարակութեանը եւ բարոյական յատկութիւնների զարգացմանը: Նա մէջբերելով մեծանուն կոմպոզիտոր Ա. Խաչատրեանի խօսքերից, ասաց. *«Երեխաները պէտք է լսեն Կոմիտասի, Չոպչովսկիի, Բորոտինի, Բէտովենի եւ Մոցարտի ստեղծագործութիւնները, եւ ո՛չ թէ միայն երեխաներին յատուկ երաժշտութիւններ»:*

Բացման խօսքից յետոյ երգչախմբի անդամներ Վանէ Օրոշեանը եւ Արգիշտ Նազարեանը գեղեցիկ նախաբաններ ներկայացրին, որոնցից յետոյ երգչախումբը կատարեց «Ոչ, չեն մեռնում հերոսները», «Մշեցի մօր երգը», «Նժդեհիկների քայլերգը», «Մայրիկիս», «Բարձրիկ Հայաստան», «Փոքրիկ նաւակ», «Աստուծաշունչ», «Երազանքներ», «Օրը», «Խաղ ու պար», «Հայ ապետների օրհներգը», «Պարոն աշխարհի նախագահ», «Պարը» եւ «Կիլիկիա» երգերը: «Փոքրիկ նաւակ» երգին գիթառով նագակցեց Արութին Հախնազարեանը, նաեւ առանձնաբար ելոյթ ունեցան ջութակով Վանա Ծմաւոնեանը եւ քլասիք գիթառով Արմէն Քեշիշեանը:

Երգաշարն աւարտելուց յետոյ, Ծահինշահի Հայ Համայնքի Վարչութիւնը երգչախմբի ղեկավար հոգշ. Հայր Սուրբին յանձնեց գեղեցիկ յուշանէր՝ առ ի գնահատում, նաեւ ծաղիկներով երախտագիտութիւն յայտնեց վոկալի դասատու Մեղեդի Քալանթար-Օհանեանին եւ երգչախմբի ծնողական յանձնախմբի անդամներին, ովքեր թէ փորձերի ընթացքում եւ թէ ձեռնարկի նախօրէին իրենց մշտական ներկայութեամբ եւ նախապատրաստական աշխատանքները գլուխ բերելով օժանդակութիւն էին ցուցաբերել հոգշ. Հայր Սուրբին եւ երգչախմբին:

Ծրագրի աւարտին բեմ հրաւիրեց գերշ. Սրբազան Հայրը՝ իր հայրական խօսքն ու օրհնանքը փոխանցելու՝ իբրեւ ձեռնարկի փակում: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը գնահատելով հոգշ.

Հայր Սուրբի տարած աշխատանքները եւ երգչախմբի անդամ-ուհի-ներին, ուրախութիւն յայտնեց երգչախմբի առաւել որակաւորման եւ անդամների թւի աճման կապակցութեամբ: Նա գնահատեց պատանիների հետեւողական մասնակցութիւնը երգչախմբի աշխատանքներին, ասելով որ մեր նոր սերնդի ներկայութիւնը ազգային-մշակութային աշխատանքներին վառ փաստն է այն իրականութեան, որ մենք

ցով: Ձեռնարկից յետոյ ծնողական յանձնախմբի միջոցով հոգեւոր հայրերի, ազգային մարմինների ներկայացուցիչների եւ երգչախմբի անդամների համար կազմակերպել էր հիւրասիրութիւն որի ընթացքում, մտերմիկ միջավայրում հնչեցին շնորհակալական եւ գնահատանքի խօսքեր առաջնորդ Սրբազան Հօր, հոգշ. Հայր Սուրբի եւ Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան կողմից պրն. Արմոնդ Հախնազարեանի միջոցով:



շնչող, ապրող եւ ստեղծագործող ժողովուրդ ենք, որ գիտենք դարերի պարտադրած արհաւիրքների միջից պարզերես եւ յաղթական դուրս գալ՝ մեր ուժն ու կարողութիւնները յատկացնելով բարուն եւ գեղեցիկին: Երգչախմբի անդամների համար պատրաստել էին գնահատագրեր, որոնք յանձնեցին առաջնորդ Սրբազան Հօր միջո-

Մթնոլորտն առաւել ջերմացաւ երգչախմբի անդամների երգերով, որին աւելի շունչ տւեց Մարտիկ Յովհաննիսեանը՝ ով այդ օրը ստանձնել էր ձեռնարկի ծայնի պատասխանատուութիւնը: Նշենք, որ երգերի նւագները պատրաստել էին Հարմա Կարապետեանի միջոցով: Ներկայ հանդիսատեսի համար եւս դպրոցի սրահում նախատեսել էր ընդունելութիւն:



## ՆԱԿԻՆՆԱՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ»

### ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՄԿԱԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Հինգշաբթի՝ 2013 թւականի մայիսի 23-ի երեկոյեան, Ծափնշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները հրաժեշտ տւեցին 2012-2013 ուսումնական տարեշրջանին:

առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը, Ծափնշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Մեսրոպ առ. քինչ. Գալստանեանը, Ծափնշահրի հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քինչ. Աղաբաբայեանը, Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Ջանսոն Աղաբաբայեանը, Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները, հրաւիրեալներ եւ սաների ծնողները:



Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը գեղեցիկ յուշումով թէ՛ բոլորի կեանքի մէջ ամեալուսատւ եւ գունագեղ փուլը մանկութիւնն է, որի ճանապարհն անցնում է «մանուկների երկրորդ տնից»՝ մանկապարտէզ-նախակրթարանից: Սոյն կրթօջախն իր կարեւոր դերն ունի երեխանների կեանքի մէջ եւ պէտք է իւրայատուկ ուշադրութիւն կենտրոնացնել այսպիսի վայրի բարգաւաճման եւ յառաջադիմութեան վրայ՝ յանուն մեր երեխանների անհոգ եւ երջանիկ ապագայի: Ապա ներկաներին հրաւիրեց՝ վայելելու ամալերջի ծրագիրը:

Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի

Մանկապարտէզ-Նախակրթարանի սաներն իրենց

ուսուցիչների տարած ջանքերի շնորհիւ, ներկայացրին գեղեցիկ երգեր եւ ասմունքներ: Գեղարուեստական բաժնի սկզբում Մանկապարտէզի աշակերտ Թէոդիկ Մինասքանեանը հանդէս եկաւ քաղցր խօսքերով բարի գալուստ մաղթելով ներկաներին եւ ապա նրանց հրաւիրեց դիտելու աշակերտական ծրագիրը: Նախակրթարանի աշակերտ Մանիֆա Յովհաննէսեանը շնորհակալութիւն յայտնեց բոլոր նրանց՝ ովքեր ոչ մի ջանք չխնայեցին ծրագրի իրականացման համար:



Սաներն երգեցին «Ձիւնը հալւեց», «Ճամբար գնալու», «Գարուն է, գարուն է», «Գիտելիք», «Հայրենիք» երգերը եւ ասմունքեցին «Այբեմարան» ու «Հայ մանուկն եմ ես» բանաստեղծութիւնները:



Գեղարուեստական բաժնից յետոյ տեղի ունեցաւ վկայականների բաշխում՝ գերշ. Սրբազան Հօր, հոգշ. Հայր Սուրբի եւ Կրթական Խորհրդի ատենապետի ձեռամբ, ապա ծրագրի փակման խօսքը փոխանցեց գերշ. Սրբազան Հայրը: Նա նախ գնահատեց դպրոցի Տեսչութեան եւ ուսուցչական կազմին՝ ամբողջ տարւալ

ընթացքում իրենց տարած աշխատանքների համար եւ ասաց. «Հայ երեխան պէտք է հայկական դպրոց յաճախի եւ մեծանայ հայկական առողջ մթնոլորտում, հայրենի կրթութեամբ եւ քրիստոնէական դաստիարակութեամբ պէտք է աճի եւ աստուածային շնորքով մեծանայ, որպէսզի հասակ առնելով՝ վաղը լինի հայութեան հետ եւ հայութեան համար, իսկ հայ ծնողը միշտ պէտք է իր երեխաններին հայ դպրոցին վստահի»:



Գերշ. Սրբազան Հայրը գեղեցիկ նշումով փակեց իր խօսքը՝ ասելով. «Այնպէս ինչպէս իշխանաձուկն իր յատուկ աւազանի մէջ է աճում, այդպէս էլ հայ երեխան հայ դպրոցի առողջ մթնոլորտում է մեծանում եւ աճում առողջ կերպով»: Առաջնորդ Սրբազան Հայրը վերջում գնահատեց երեխաններին՝ իրենց արտասանած իւրաքանչիւր բառի եւ յատկապէս խօսքերի համար:

Ծրագրի աւարտին ներկաները Ծնողական Խորհրդի միջոցով հիւրասիրուեցին համեստ հիւրասիրութեամբ:



# ՀԱՀԻՆՀԱՀՐԻ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻԱՅ» ՅԱՆՁՆԱԽՄԻԻ ԱՅՅԸ Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Ուրբաթ՝ 2013 թականի մայիսի 24-ի երեկոյեան, Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի անդամները գրխաւորութեան Ծափինշահրի հոգետր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի եւ ընկերակցութեամբ Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչ արն. Ռազմիկ Մարկոսեանի եւ բրշն. Ռազմիկ արկ. Գալստանեանի այցելեցին Նոր Զուղայի Հայոց Ազգային Ծերանոց:



Սկզբում Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութեան նախագահ տկն. Արմինէ Սիմոնեանը բարի գալստեան խօսք ասաց, ուրախութիւն յայտնեց հոգշ. Հայր Սուրբի եւ Յանձնախմբի այցելութեան համար եւ ներկայացրեց Ծերանոցի Յանձնախմբի եւ Վարչութեան ներկայ անդամուհիներին, ապա խօսքը փոխանցեց Ծափինշահրի



«Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի անդամ տկն. Վարդուհի Պօղոսեանին, ով իր խօսքի մէջ ասաց. «Մենք այսօր շատ ուրախ ենք եւ յուզւած, որ առիթ ունե-

ցանք այցելել մեծահասակների օթեւան: Ուզում ենք մեր յարգանքը մատուցել ձեզ, համբուրել ձեր ձեռքերը, գլուխ խոնարհել ձեր սպիտակ վարսերի առջեւ եւ շնորհաւորել «Հայ Մօր Տարի»-ն եւս ձեզ եւ ձեզ համար ցանկանալ առողջ եւ ուրախ կեանք»:



Ապա հոգշ. Հայր Սուրբը շնորհակալական խօսքեր ուղղեց Ծերանոցի Յանձնախմբի անդամներին՝ իրենց անմիջական ջանքերի եւ տարած աշխատանքների համար եւ իր խօսքը շարունակեց ասելով. «Ծերանոցը նման է մանկապարտէզի, քանի որ մեր մեծ մայրերը եւ հայրերը ինչքան իրենց տարիքը մեծանում է՝



նմանում են անմեղ մանուկների: Այն նաեւ նման է եկեղեցու, որովհետեւ այստեղ կայ մեծահասակների



**սէրը, գուրգուրանքը եւ օրհնութիւնը»:** Հոգշ. Հայր Սուրբը նաեւ գնահատեց Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի բոլոր անդամի ընդառայումը՝ Ծերանոց այցելելու կապակցութեամբ:



Հոգշ. Հայր Սուրբի արտայայտութիւններից յետոյ, ուրախ տրամադրութիւն ստեղծեց Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» հրաւերով ներկայացած սիրելի Մարտիկ Յովհաննէսեանը՝ իր գեղեցիկ երգ-երաժշտութեամբ: Ազգային Ծերանոցի սիրելի տարեցները բոլորն էլ սիրում էին մասնակցել պար-ուրախութեանը, սակայն նրանցից մեծ մասի առողջութեան իրավիճակը թոյլ չէր տալիս. նրանք պարում եւ ուրախանում էին հէնց նստած՝ իրենց տեղում:



Ազգային Ծերանոցի Յանձնախմբի անդամների միջոցով կատարեց հիւրասիրութիւն, որից յետոյ «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի անդամների ցանկութեամբ սիրելի տատիկներից եւ պապակից խնդրեցին, որպէսզի իրենք եւս իրենց քաղցր ձայներով ջերմացնեն մթնոլորտը. իսկապէս բոլորին յուզեց նրանց ձայնը եւ կատարումները:

Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախումբը համեստ ներքներ էր պատրաստել սիրելի մեծահասակ-

ների համար՝ նրանց գնահատելու եւ ուրախացնելու նպատակով: Նւէրները յանձնեց հոգշ. Հայր Սուրբը, որը մեծ ուրախութիւն պատճառելով նույնիսկ յուզմունքի արցունքներ հոսեցրեց զգայուն եւ մաքրաոգի գաւառակների աչքերից:

Ծերանոցում բնակող մեծահասակներից ոմանք բժիշկների խորհուրդով հանգստանում էին իրենց կացարաններում. հոգշ. Հայր Սուրբը, Յանձնախմբի անդամների հետ այցելեցին նրանց սենեակները, հանդիպեցին նրանց եւ մի քանի քաղցր խօսքեր ասելով՝ նրանց յանձնեցին իրենց ներքները:



Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախմբի դասաւորումով այդ օրը Ծերանոցի բնակիչներն ու աշխատակազմը հիւրասիրեցին ընթրիքով. բոլորը միասին Ազգային Ծերանոցի բակում ուրախ տրամադրութեամբ սեղան նստեցին եւ վայելեցին հանդիպման վերջին պահերը: Ընթրիքից յետոյ Ծերանոցի Յանձնախմբի կողմից տկն. Արմինէ Սիմոնեանը այցելող խմբի իւրաքանչիւր անդամին նւիրեց «Հայկական Ժողովրդական Տարագներ»-ի գիրքը:

Ծափինշահրի «Հայ Մօր Տարւայ» Յանձնախումբն իր առաւել քան 5 ժամ տեւած այցելութիւնն աւարտեց հոգեկան գոհունակութեամբ ու բաւարարածութեամբ, յուզմունքներով եւ ուրախ յուշերով:



**ՏԱՅԱՍԱՆԻ ՏԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ  
95-ԱՄԵԱԿԻ ՏԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՏԻՆՀԱՏՐՈՒՄ**

Ուրբաթ՝ 2013 թականի մայիսի 31-ի երեկոյան, ՀՀ առաջին Անկախութեան տօնակատարութեան 95-ամեակի Ծահինշահրի Յանձնախումբը, Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում մեծ հանդիսութեամբ տօնեց Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 95-ամեակը: Ծրագրին ներկայ էին Սպահան Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Ս. Բաբգէն Եպս. Չարեանը, Ծահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Ս. Անանիա վրդ. Գունանեանը, հոգեւոր հովիւ արժն. Ս. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, Սպահանի Հայոց Թեմի Ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները, Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անդամները, մեծ թուով հայորդիներ՝ Ծահինշահրից եւ Նոր Զուղայից:



Բանախօսելու համար հրաիրել էր Երեւանի Պետական Համալրարանի Իջեւանի մասնաճիւղի Հումանիտար ֆակուլտետի դեկան եւ դասախօս Վարդան Ալեքսանեանը:

Ն.Զ.-ի Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծահինշահրի Մասնաճիւղի Սկսուտական Միաւորը, գլխավորութեամբ Էդիկն Բաբումեանի, ծրագրի բացումը կատարեց շքերթով եւ Հայաստանի դրօշակի ծածանման արարողութեամբ, որի ընթացքում հնչեց Հայաստանի Հանրապետութեան հիմնը:



*պետականութեան, բանակի, համալսարանի եւ մի երկրի բազում ստորոգեալների հիմքերը հաստատելը նոյնքան կենսական կտակ-*

*ներ են ու ժառանգութիւն մեր ժողովրդի համար, այսօր ապրող սերունդներին համար, որքան նոյնինքն անկախութեան գոյառումը»: Տկն. Յարութիւնեանը մայիսեան ու արցախեան յաղթանակները եւ այսօրայ Հայաստանի անկախութիւնը իրար կապակցելով եւ իրարից ներշնչած համարելով, բացման գեղեցիկ իր խօսքն աւարտեց՝ ասելով. «Մեր պատմութեան իրերայաջորդ հանգրւանները այս տարածութեան վրայ դիտելով նոյն ինքնավստահութեամբ կարող ենք յայտարարել, որ Աւարայրից, Սարգարապատից ու Արցախից հասնող պատգամները նոյնն են՝ պէտք է պայքարենք նոյն յանձնառութեամբ, ազատ ու անկախ Հայաստանը հասցնելով միացեալ Հայաստանի հանգրւանին», որից լստոյ բեմ հրաւիրեց օրայ բանախօսին:*



Պատմաբան պրն. Ալեքսանեանը շնորհաւորելով մայիսեան յաղթանակի օրայ առիթով նշեց, որ մայիս 28-ը հայոց տօնացոյցի այն յիրաւի տօներից մէկն է, որը միաւորում է ողջ հայ ժողովրդին, աշխարհասփիւռ հայութեանը՝ անկախ բնակութեան վայրից, կուսակցական պատկանելութիւնից, գաղափարական համոզմունքներից, սեռից եւ տարիքից: Բանախօսը հանգամանօրէն անդրադառնալով մայիսեան հերոսամարտերին եւ անկախութեան նախօրեակներում Հայաստանում տիրող կացութեան մասին եւ եզրակացնելով՝ հա-

յոց այս մեծ սիրագործության արժեքի մասին ասաց. «Հայաստանի առաջին Հանրապետութիւնը մեր հպարտառիթ երեւոյթն է. այն հայոց ազատատենչ ոգու խորհրդանիշը, հաւատը, ուժը եւ իւրատեսակ կամուրջն է մեր անցեալի ներկայի եւ ապագայի միջեւ»: Պրն. Ալեքսանեանը յատկապէս ընդգծումով առանձնացրեց Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին տեղի ունեցած մի շատ կարեւոր իրադարձութիւն՝ 1919 թականի մայիսի 28-ին հրապարակւած Միացեալ Հայաստանի Հանրապետութեան հռչակման գործողութիւնը, որով սկիզբ դրեց ամբողջական Հայրենիքի վերականգնման գաղափարին՝ մի կարեւոր իրաւա-քաղաքական ակտ, որը այսօր եւս մեզ համար կարեւոր է: Նա նշելով Հայաստանի առաջին Հանրապետութեան մեզ թողած պատգամների մասին, դրանցից կարեւորագոյնները համարեց՝ միաբանութեան, սեփական ուժերին ապաւինելու եւ պետականաշինութեան գործում առաջին Հանրապետութեան հիմնադիրների անձնուրաց եւ ինքնամոռաց նկրումի երեք արժէքաւոր դասերը:

*մէջ՝ Սարգարապատում, Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում, պայքար մղեց՝ աշխարհին ապացուցելու, որ հայութիւնը հաւատում է ի՛ր սեփական ուժերին եւ ո՛չ թէ օտարի»:*



Գերշ. Սրբազան Հայրը ւարստելով իր խօսքը, եզրակացրեց. «Մէկ պատգամ ունեմ այսօր ձեզ փոխանցած բոլոր պատգամների կողքին, եւ այն է՝ չլքել հայոց հողը եւ չհեռանալ Հայրենիքից՝ օտար աշխարհներ գնալու, օտարի երկրները զարգացնելու եւ պայծառացնելու... Մաղթում եմ, որ այսօրւայ մեր փոքրիկ Հայաստանը դառնայ մեր վաղւայ ազատ, անկախ, ամբողջական եւ միացեալ մեծ Հայաստանի տեսլականը, որպէջսի այս անգամ Արարատ լեռան վրայ ծածանւի արիւնից ծորած մի երիգ կարմիր, երկնքից պոկւած մի կտոր կապոյտ ու հասուն հասկերի շողը նարընջագոյն եւ վեց դարերի խաւարի վրայ փողփողոյ եռագոյն դրօշը»:



Ծրագրի երկրորդ բաժնում բեմը տրամադրուեց համայնքի տաղանդաշատ երիտասարդ Մարտիկ Յովհաննէսեանին, ով իր ազգային, յեղափոխական, հայրենասիրական եւ ժողովրդական երգերով ուրախութիւն եւ բարձր տրամադրութիւն փոխանցեց բոլորին, մտովի տեղափոխելով Մայր Հայաստան, Արագածի փէշին Սասնայ պարը պարելու եւ Արարատի գագաթին ծածանելու հայկական դրօշն եռագոյն: Գեղարեստական յայտագրի պահին մեծ խանդավառութիւն էր տիրում հայոց դպրոցի տարածքում եւ ներկաները համախմբւած, սիրելի Մարտիկի երգ-երաժշտութեան ներքոյ պարեցին մեր հայկական ասանդական շուրջպարը:

Ծրագրի վերջին բաժնում բեմ հրաւիրուեց Սպահանի Հայոց Թեմի թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը, ով իր հայրական խօսքի մէջ գնահատելով կազմակերպւած ծրագրի իրականացման համար աշխատած բոլոր անձանց եւ հայութեան պատմութեան մէջ մեծ եւ կարեւոր իրադարձութիւն համարելով Հայաստանի առաջին Հանրապետութեան ստեղծումը, ասաց. «1918 թականի մայիս 28-ին, Ս. էջմիածնի զանգակների ղողանջի ներքոյ, մեր ժողովուրդը՝ աշխարհահական թէ՛ եկեղեցական, տարեց թէ՛ երիտասարդ, կին թէ՛ տղամարդ, բոլորը միասին՝ մէկ բռունցք դարձած, Արարատեան դաշտի

Ձեռնարկի ւարստին բոլոր բոլոր ներկաները վայելեցին Յանձնախմբի միջոցով պատրաստւած համեստ հիւրասիրութիւնը:



### ՎԵՐՁԻՆ ՉԱՆԳԻ ՀԱՆԴՐՈՒԹԻՒՆ ՇԱԿԻՆՇԱԿՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՏԱՐԲԱԿԱՆ ԵՒ «ՄԱՍԻՍ» ՈՒՂԵՑՈՅՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Երկուշաբթի՝ 2013 թականի յունիսի 17-ի երեկոյան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցի սրահում կայացաւ վեցերորդ եւ երրորդ ուղեցոյցի շրջանաւարտների «Վերջին զանգ»-ի հանդիսութիւնը: Ծրագրին ներկայ էին Շահինշահրի հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապետ արն. Զանսոն Աղաբաբայանը, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները, սաների ծնողներն ու հարազատները:

րանն աւարտած առաջին դասարանցիները, ովքեր ներկաներին հրաւիրեցին դիտելու եւ ունկնդրելու երրորդ ուղեցոյցի սաների «Վերջին զանգ»-ի ծրագիրը:



Երրորդ ուղեցոյցի աշակերտ-ուհիներն եւս իրենց հերթին ներկայացրին «Վերջին զանգ»-ի առթիւ «Սրբոց Վարդանանց» դպրոցին նւիրած նորաստեղծ երգը, «Տես ինչպէս մեզ մօտ անցան», «Տարօնցու երկիրն է Մուշ», Արամէի եւ Մհերի «Վերջին զանգ» երգերը, որոնք ընդմիջում էին սաների յուշախառն կարճ խօսքերով: Յետոյ երրորդ ուղեցոյցի աշակերտներին միացան վեցերորդցիները եւ միասնաբար ներկայացրին «Հայ ենք մենք» երգը, ապա մէկ առ մէկ նարնջ շուրթերից հնչեցին իրենց սրտի խօսքերը՝ հայոց դպրոցի սուցիչներին ուղղած, որոնց նւիրեցին ծաղիկներ: Յուզիչ էր պահը, երբ դեռ երէկւայ փոքր երեխաներն այսօր հասակ առած, վայելուչ պատանի եւ պարմանուհիներ դարձած՝ համարձակօրէն գովասանքի խօսքեր էին նւիրում իրենց դաստիարակներին:

Ամենակգբում հանդէս եկան վեցերորդ դասարանի աշակերտ-ուհիները: Նախ Արինէ Ամիրխանեանը եւ Արմիկ Թուսեանն ընթերցեցին բացման խօսքը, ապա համադասարանցիների հետ իրենց ծնողներին եւ հանդիսատեսին մատուցեցին «Հայոց Դպրոց», «Իմ սուրբ Հայրենիք», «Մեր լեզուն», «Գարնանամուտ», «Զօն՝ հարազատ դպրոցին» եւ «Խօսք իմ որդուն» ասմունքներն ու «Ես մի հայ պատանի եմ», «Երազանքների փերի» եւ «Պարը» երգեր:



Յաջորդիւ բեմը տրամադրեց երրորդ ուղեցոյցի սաներին: Նրանց բեմ ուղեկցեցին արդէն նախակրթա-

Երգերի աւարտին երրորդ ուղեցոյցի սաները խորհրդանշականօրէն «Հայոց լեզւի գիտութեան բանալին» փոխանձեցին ամենափոքրիկներին՝ Մանկապարտեզ-Նախակրթարանի սաներին, յուսալով որ

նրանք կը լինեն արժանի փոխարինողներ հալոց դպրոցում:

Ծրագրի ամենահետաքրքիր պահերից եղաւ տեսա-նիւթի ցուցադրում, որով երրորդ ուղեցույցի սաների դպրոցական անցած ճանապարհը ներկայացուում էր լուսանկարներով՝ գեղեցիկ երաժշտութեան ներքոյ. բոլորը կարծէք տեղափոխեցին տարիներ առաջ, երբ օրւայ հերոսները տակաւին շատ փոքր էին, եւ այսպիսով արթնացան անցեալի բարի եւ հաճելի յուշեր:



Գեղարեստական բաժինն աւարտելուց յետոյ, տկն. Վարդուհի Պօղոսեանը բեմ հրաւիրեց դպրոցի վերակացու պրն. Զանիկ Թահմազեանին՝ արտայայտելու, ով ամփոփ կերպով ներկայացրեց երեխաների տարած աշխատանքները ամբողջ տարւայ ընթացքում՝ սկսելով «Սրբոց Թարգմանչաց Տօն»-ից եւ շարունակելով «Սրբոց Վարդանանց Տօն»-ով, Ապրիլեան ծրագրերով, դրանց կողքին ունենալով կրթա-դատիրակչական մրցութիւններ: Պրն. Թահմազեանը նշեց աշակերտների ձեռք բերած յաջողութիւնների մասին՝ մարզական մրցութիւններում եւ պետական միջնա-

կարգ դպրոցների մուտքի քննութիւններում, ապա խօսքը փոխանձեց Սպահանի Հալոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապետ պրն. Զանսոն Աղաբաբայեանին:

Պրն. Աղաբաբայեանն իր խօսքի սկզբում նախ դպրոցի պատասխանատուներին եւ շրջանաւարտներին շնորհաւորեց գեղեցիկ գեղարեստական ծրագրի կազմակերպման եւ իարկանացման համար՝ գնահատելով նրանց տարած աշխատանքները, ապա խօսքն ուղղելով շրջանաւարտներին, նրանց մաղթեց յաջողութիւն եւ գիտկական ասպարէզում փայլուն վերելքներ ու բարձր նաճումներ:



Ծրագրի շարունակութեան մէջ, արժն. Տ. Վարդան քինյ. Աղաբաբայեանի, պրն. Զանսոն Աղաբաբայեանի, Շահինշահի Հայ Համայնքի Վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Ծիրանեանի եւ պրն. Զանիկ Թահմազեանի միջոցով տեղի ունեցաւ վկայակաների բաշխում, որին յաջորդեց Կրթական Խորհրդի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի համատեղ որոշումով՝ երրորդ ուղեցույցի աշակերտ Արին Թորոսեանի գնահատանքը՝ ուսումնական եւ մարզական բնագաւառներում լուրջ հետեւողականութեան, նաեւ ազնիւ վարք ու բարքի համար:

Նշենք, որ ծրագրի գեղարեստական բաժնին իր նագակցուցեամբ օժանդակել էր տկն. Աննա Դանիէլը:



**«ԷԼԻԻՐԱ ՂԱԳԱՐԵԱՆԻ  
ՉՆՈՒՄՆԵՍԻ ԱԲԱՆԳՈՒ ՆՈՐ  
ՋՈՒՂԱՅՈՒՄ» ԽՈՐԱԳԻՐԸ  
ԳՐԹԻ ԾՆՈՐՋԱՆԳ-ԷՍԸ**



Ուրբաթ, յունիսի 7-ի երեկոյեան, Նոր Ջուղայում, բազմավաստակ ուսուցիչ եւ ձեռարեւտի մեծ վարպետ Էլիիրա Ղազարեանի բնակարանում տեղի ունեցաւ յիշեալի ձեռարեւտի գրքի շնորհանդէսը: Սոյն գրքում, որը կրում է «Էլիիրա Ղազարեանի ձեռարեւտի աւանդը Նոր Ջուղայում» խորագիրը, ընդգրկած են 85-ամեայ վարպետի կենսագրական տեւալները եւ իւրօրինակ ձեռագործների լուսանկարները՝ ընթերցողին առիթ ընձեռելով ծանօթանալու ուսուցչուհու բարձրաճաշակ արեստին:



Օրդ. Էլիիրա Ղազարեանը ծնել է 1928 թականին, Նոր Ջուղայում եւ 12 տարեկանից աչքի է ընկել իր ձեռագործներով: Նա երկար տարիներ աշխատել է «Քանանեան» դպրոցում որպէս անգլերէն լեզուի եւ ձեռագործի ուսուցիչ, որտեղ ինչպէս իւրաքանչիւր նկարած հայ ուսուցիչ՝ ջանք չի խնայել իրեն վստահած աշակերտների կրթման եւ դաստիարակման հարցերում: Արեստագէտ հայուհին համայնքի իգական սեռի ներկայացուցիչներին նույնպէս դասաւանդել է ասեղնագործութիւն, ճաղագործութիւն, կար ու ձեւ եւ այլ ոճերով ձեռագործներ:


«Էլիիրա Ղազարեանի ձեռարեւտի աւանդը Նոր Ջուղայում» գրքի մէջ տեղ են գտել բազմաթիւ լուսանկարներ՝ վարպետի ասեղնագործութիւններից, ճաղագործութիւններից եւ յատկապէս նշուած երկու ոճերի համադրութեամբ պատրաստուած բացառիկ ձեռագործներից, որոնք իրենց նրբագեղութեամբ եւ գոյների ներդաշնակութեամբ շոյում են արեստատաւէր ընթերցողի ճաշակը: Գրքի ամենահին ձեռագործն ունի 73 տարւայ վաղեմութիւն:



Էլիիրա Ղազարեանի կրտսեր քոյրը՝ Դիանա Ղազարեանը (Խաչիկեան), գրքի «Երկու խօսք»-ում, բացատրել է, որ իրականացնելով իր աւագ քրոջ վաղեմի երազանքը՝ ձեռարեւտի գրքի տպագրման կապակցութեամբ եւ նպատակ ունենալով յաւերժացնելու վարպետի բացառիկ արեստը, նախաձեռնել է այս գրքի տպագրումը, յոյս ունենալով, որ այն ապագայ սերնդի մէջ սեր եւ ճաշակ է առաջացնելու:



Այս գործում Դիանա Ղազարեանն օգտուել է Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանի խորհուրդներից եւ ուղղութիւններից, իսկ առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ գրքի ձեւակերպումը կատարել է Թովմա սրկ. Գալստա-



նեանի միջոցով: Գըրքում տեղ է գտել նաեւ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի դուատանքի խօսքը՝ վաստակաւոր ուսուցչի գործունէութեան եւ գրքի տրպագրման կապակցութեամբ:

Սոյն գրքի շնորհանդէսին Էլիրա Ղազարեանից ու նրա հարազատներից բացի՝ ներկայ էին՝ թեմա-

կալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, արժն. Տ. Վազգէն քննչ. Քեօշկերեանը, Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի եւ հայոց դպրոցների ներկայացուցիչներ, Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութեան, Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի վարչութիւնները, «Քանանեան» դպրոցի ուսուցչական կազմի անդամներ, վաստակաւոր ուսուցչուհու մի խումբ աշակերտներ եւ ձեռագործով զբաղող անհատներ:



Սկզբում բացման եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ ուսուցչուհու քոյրը՝ Դիանա Ղազարեանը: Այնուհետեւ ձեռամբ առաջնորդ Սարբազան Հօր եւ մասնակցութեամբ արժն. Տ. Վազգէն քննչ. Քեօշկերեանի ու Դիանա Ղազարեանի տեղի ունեցաւ գրքի գինեձօնման արարողութիւնը, որից յետոյ ծրագիրն ընթացաւ մտերմիկ մթնոլորտի ներքոյ եւ ներկաները հիրասիրելիս՝ ունկնդրեցին Էլիրա Ղազարեանի մի շարք աշակերտների ու դասընկերուհիների գեղեցիկ ու

հետաքրքիր յուշերը: Արտայայտութիւնների շարանում դուատանքի եւ շնորհաւորանքի խօսքեր ասացին նաեւ Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբաջեանը, «Քանանեան» դպրոցի փոխ-տեսուչ Ռիմա Սիմոնեանը, «Արարատ» Միութեան Մշակութային Միատրի Վարչութեան նախագահ Քարմէն Ղեւեանը, «Արմէն» Տարրական Համալիրի տեսուչ Լիոնթին Աբրահամեանը:



Ծրագրի աւարտին իր հայրական օրհնանքը փոխանցեց գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը: Առաջնորդ Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնելով բազմավաստակ ուսուցչուհու գրքի շնորհանդէսին ներկայ լինելու կապակցութեամբ, շնորհաւորեց գրքի լոյս ընծայումը եւ ասաց. *«Մենք պէտք է արժեւորենք մեր մեծերին: Մեր մեծերի գործերը պէտք է արժէք ստանան մեր նաչածքի դիմաց՝ մեր գնահատանքով: Օրդ. Էլիիրան եւ նրա նմաններն իրենց ներդրումներով սերունդներ են դաստիարակել: Այսօր օրդ. Էլիիրայի արեւստի գործը յաւերժանում է եւ փոխանցւում նոր սերունդներին, որպէսզի նրանք եւս իրենց հերթին կարողանան Նոր Զուղայի արեւստը փոխանցել յաջորդող սերունդներին: Թող Աստուած նման աշխատանքները շատացնի մեր համայնքներում՝ նոր սերունդի միտքն ու հորիզոնը մշակութային արժէքների եւ արեւստների վրայ կենտրոնացնելու համար»:*

Յատկանշական է, որ նոյն վայրում կազմակերպել էր նաեւ մի գողտրիկ ցուցահանդէս, որտեղ այցելուները մօտիկից ծանօթացան օրդ. Ղազարեանի եզակի աշխատանքներին: Վերջում ներկաներից իւրաքանչիւրն ստացաւ ձեռարկեստի գրքից մէկ օրինակ եւ առիթ ունեցաւ իր տպաւորութիւններն ու բարեմաղթանքներն արձանագրելու յուշամատեանում:



# ԱՐՄԻՆԷ ՅՈՎԱԷՓԵԱՆԸ ՍՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՀԱՏԻԵՑ ՈՐՊԷՍ ՍՊԱՀԱՆԻ ԱՐԻԵՍՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱԳԷՏ



Հայ կանայք ոչ միայն աչքի են ընկնում իրենց մայրական նիրումով ու անձնագոհությամբ, այլև՝ իրենց տաղանդով եւ պատասխանատուութեան բարձր զգացումով, որոնց շնորհիւ բազմաթիւ անգամներ են փայլել տարբեր բնագաւառներում, իրենցից յաջողակ ու վստահելի կերպար ներկայացնելով:

Իրանահայ յաջողակ կանանցից է Արմինէ Յովսէփեանը: Նա աշխատում է Սպահանի Արեւստի Համալսարանի Կրթական Հարցերի Բաժնում որպէս վերահսկիչ: Նա իրանական նախորդ տարւայ ընթացքում Սպահանի Նահանգապետարանի կողմից ճանաչել է նոյն համալսարանի օրինակելի մասնագէտ, ինչի համար արժանացել է գնահատագրի՝ նահանգապետ Զաքեո-Էսֆահանհի կողմից:

Արմինէ Յովսէփեանը ծնել է 1974 թւականի յունիսին՝ Նոր Զուղայում: Տարրական, ուղեցոյց եւ միջնակարգ կրթութիւնն ստացել է Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցներում եւ գերազանց միջինով աւարտել՝ ստանալով տնտեսագիտութեան ճիւղի դիպլոմ:

Այնուհետեւ 1994-95 ուսումնական տարեշրջանում ընդունելով Սպահանի Պետական Համալսարանի մանկավարժութեան ճիւղում վարչագիտութիւն եւ ուսումնական ծրագրաւորում թեքումով, լիսանս է ստացել 1997 թւականին:


2001 թւականից աշխատում է Սպահանի Արեւստի Համալսարանում, եւ կարճ ժամանակահատուածում իր պատասխանատուութեան եւ բարձր տաղանդի շնորհիւ նշանակել է Համալսարանի Կրթական Հարցերի Բաժնի վերահսկիչ, որի հանգամանքով պաշտօնավարում է մինչեւ օրս:

Նա 2006, 2007 եւ 2009 թւականներին առանձին գնահատագրերով, որպէս օրինակելի աշխատող, գնահատել է Համալսարանի Բուհական եւ Յետ-բուհական Կրթութեան Բաժնի փոխտնօրէնի եւ Կրթական Հարցերի Բաժնի տնօրէնի կողմից:


Արմինէ Յովսէփեանն ուսման եւ աշխատանքի ասպարէզներում յաջողակ լինելուց բացի, զբաղւել է նաեւ մարզական փորձերով եւ երկար տարիներ անդամակցելով Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան վալիբոլի խմբին, մասնակցել է տարբեր մրցաշարների՝ արձանագրելով բազմաթիւ յաջողութիւններ նահանգի եւ երկրի մակարդակներում: Նա ունի վալիբոլի մարզիչի երրորդ կարգի արտօնագիր: Իսկ 1999 եւ 2000 թւականներին, երկու տարի շարունակ մասնակցելով Մշակույթի եւ Իսլամական Առաջնորդութեան Նախարարութեան կողմից կազմակերպւած «Գրքի ամփոփում եւ վերլուծութիւն» մրցույթին, հերթաբար հանդիսացել է առաջին եւ երկրորդ կարգի մրցանակակիր:

Ամուսնացած է եւ ունի երկու զաւակ:

Ընդհանուրով Արմինէ Յովսէփեանին օրինակելի մասնագէտ ճանաչելու համար, նորանոր յաջողութիւններ ենք ցանկանում նրան եւ բոլոր հայ կանանց:







Այսու տեղեկացնում ենք մեր թեմի յարգելի ժողովրդին, որ Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհուրդը կեանքի է կոչել Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց եւ Խոյզան գիւղի Ս. Աստուածածին Եկեղեցու վարչութիւնները, որոնք արդէն իսկ անցել են աշխատանքի եւ պարտականութիւնների բաժանում կատարել ըստ հետեւեալի.

**Նոր Զուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն**

- Պրն. Ղուկաս Ծատուրեան՝ ..... ատենապետ
- Պրն. Մասիս Ղազարեան՝ ..... փոխ-ատենապետ
- Տկն. Ֆրիդա Ղարիբեան՝ ..... քարտուղար
- Տկն. Անահիտ Յարութիւնեան՝ ..... գանձապահ
- Տկն. Անժել Ղարախանեան՝ ..... գոյքապահ
- Պրն. Ռոբերտ Սարեան՝ ..... խորհրդատու անդամ
- Պրն. Հենրիկ Յակոբեան՝ ..... խորհրդատու անդամ

**Խոյզան Գիւղի Ս. Աստուածածին Եկեղեցու Վարչութիւն**

- Պրն. Հայկ Հայրապետեան՝ ..... ատենապետ
- Սրկ. Համլետ Մինասեան՝ ..... փոխ-ատենապետ
- Պրն. Խոսրով Եղսանեան ..... քարտուղար
- Պրն. Եղիշ Վարդումեան ..... գանձապահ
- Պրն. Ասպետ Հայրապետեան ..... գոյքապահ

*Սպահանի Հայոց Թեմի  
Կրօնական Խորհուրդ*

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Զ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Կարչութեան**

**Ս. Գէորգ եկեղեցու նւիրատուութիւն**

- 2,860,000 ուսու. Ծայան:
- 2,000,000 ուսու. Էջմին Աբղայեան, Խէրոխան:
- 1,000,000 ուսու. Գայիանէ Եղիազարեան, Արմինէ եւ Գէորգ Յովսէփեաններ:
- 500,000 ուսու. Էմմա Ծնատեան՝ իր ծնողների՝ Հրանուշ եւ Ծահնագար Ծնատեանների յիշատակին, Հօւտչի, ոմն(2):
- 330,000 ուսու. Անահիտ Բաղումեան:
- 250,000 ուսու. Ազար:
- 220,000 ուսու. ոմն:
- 100,000-ական ուսու. Արա Աւանէսեան, Հերմինէ Ղարիբեան, Մատի Նիկողոսեան, Քրդէթ Յարութեան, Մեհնազ Ղաղիմի, Մոհամմադ Քազէմի:
- 20,000 ուսու. Թորաբի:

**Խաչի ցոյգելու առթիւ**

- 400,000-ական ուսու. Մուսաի, Միոզայի:
- 350,000 ուսու. Ծահլա:
- 250,000 ուսու. Թորաբի:
- 200,000 ուսու. Էմմա Ծնատեան:
- 100,000-ական ուսու. Օֆիկ Գեորգեան, Հերին Թորոսեան, ոմն:

**Ս. Ներսէս եկեղեցու տօնի առթիւ**

- 200,000 ուսու. Անուշ Յովհաննիսեան՝ Լեւոն եւ Հականուշ Յովհաննիսեանների յիշատակին, Անուշ Յովհաննիսեան՝ Արտաշէս եւ Սերա Յովհաննիսեանների յիշատակին:

**Ջանազան առիթներ**

- 2,000,000 ուսու. Խաղոպեան ընտանիք՝ Ժորժ եւ Քրիստինէ Խաղոպեանների յիշատակին:
- 1,000,000 ուսու. Սուրէն եւ Մարո Մինասեաններ:
- 600,000 ուսու. Լուսահանգիստի ուխտատուներ:
- 500,000-ական ուսու. Ջանէս Գրիգորեան՝ իր հօր՝ Սերոբ Գրիգորեանի յիշատակին, Ադրինէ Վարդազարեան, Կարո Յովսէփեան:
- 350,000 ուսու. Արիա Տէր Մարտիրոսեան:
- 200,000 ուսու. ոմն:
- Սեղանի ծածկոցներ. ոմն՝ Ս. Մինաս եկեղեցուն:
- Մէկ սինք. Ռիթա եւ Վարդան Մկրտչեաններ՝ իրենց ծնողների յիշատակին՝ Ս. Մինաս եկեղեցուն:
- Մէկ փոքր գորգ. Տիգրան եւ Աննայի Քեշիշեաններ՝ իրենց ծնողների՝ Գալուստ եւ Ծաղիկ Քեշիշեանների յիշատակին՝ Ս. Մինաս եկեղեցուն:
- Մէկ փոքր գորգ. Տիգրան եւ Աննայի Քեշիշեաններ՝ Յարութեան եւ Ծովինար Ղազարեանների յիշակին՝ Ս. Յովհաննու եկեղեցուն:

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի**

- 100,000-ական ուսու. Մատի Նիկողոսեան:

**Հանգուցեալ Արաքս Մելքոնեանի յիշատակին**

- 200,000-ական ուսու. Տիգրանուհի Մանսուրեան, Ռոբերթ Հազարմայեան:
- 150,000 ուսու. Հրանդ Ջարգարեան:

**Հանգուցեալ Իշխան Կարապետեանի յիշատակին**

- 500,000 ուսու. Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն:
- 200,000-ական ուսու. Հայ Ուս. Չհարմախալ Միութիւն, Վարուժ Ղարիբեան, Նոռա Մկրտչեան:
- 100,000-ական ուսու. Արա եւ Հոսիսիկ Սիմոնեաններ, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Վաչէ եւ Նոռա Ծահիշեաններ, Աուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Աննիկ Խաչիկեան, Սեդա Աբղայեան, ոմն:

**Հանգուցեալ Տ. Փառէն Միրզախանեանի յիշատակին**

- 3,000,000 ուսու. Մեղմիկ, Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ:
- 1,000,000 ուսու. Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն:
- 500,000-ական ուսու. Սնկերտ գիւղի Եկեղեցու Վարչութիւն, Ղարղուն գիւղի Եկեղեցու Վարչութիւն, Հայ Ուս. Չհարմախալ Միութիւն, Փերիոյ Կրթասիրաց Միութեան Ծահինշահրի Մասնաճիւղ, Հայկազ Միրզախանեան:
- 350,000 ուսու. Անի շէնքի բնակիչներ:
- 300,000-ական ուսու. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Արմենակ Նազարեան:
- 200,000-ական ուսու. Խաչատուր քննչ. Ջարգարեան, Աննա Քեշիշեան:
- 150,000-ական ուսու. Գալստան Ղազարեան, Ծաղկուշ Գալստեան, Արամայիս Թահմազեան:
- 100,000-ական ուսու. «Շուշանիկ» Երգչախումբ եւ Հոգեւոր Լսարան, Ծահինշահրի Հայ Կանանց Եկեղեցեաց Միութիւն, Ռաֆիկ Նազարեան, Ջանիկ Ղազարեան, Անուշ Յովհաննիսեան, Ռազմիկ Գալստեան, Սերոժ Աւանէսեան, Ալբերտ Սահակեան, Հայկազ Ծահնագարեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութեաններ, Ծաղկուշ Աբէլեան:
- 50,000-ական ուսու. Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Վրէժ Տէր Աւանէսեան:

**Հանգուցեալ Վարդուհի Ղեւոնդեանի յիշատակին**

- 300,000 ուսու. Հայկազ Խաչատրեան:
- 200,000 ուսու. Խաչատուր քննչ. Ջարգարեան:
- 100,000-ական ուսու. Սոնիկ Կիրակոսեան, Սաթի եւ Սոնա Ջարգարեաններ, Հայկ եւ Սիրանուշ Յովսէփեաններ, Ռազմիկ եւ Մարո Գալստեաններ:
- 70,000 ուսու. Համազ Մարգարեան:
- 50,000-ական ուսու. Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Մարգարիտ Ջարգարեան:

**Հանգուցեալ Գալստան Մկրտչեանի յիշատակին**

- 1,500,000 ուսու. Մկրտչեան ընտանիք (ԱՄՆ):
- 500,000 ուսու. Սերոբ, Վիգէն եւ Հայկուհի Մկրտչեաններ:
- 250,000 ուսու. Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ:
- 200,000-ական ուսու. Յովսէփ Յովսէփեան, Խաչիկ Յովսէփեան:
- 100,000-ական ուսու. Աբղայ Յովսէփեան, Մարջան Մինասեան, Հմայակ Յովսէփեան, Գալստան Ղազարեան, Լուսիկ Տէր Ստեփանոսեան, Ջալէն Խաչիկեան, Հայկազ Պետրոսեան, Հայկ եւ Սիրանուշ Յովսէփեաններ, Երանդ Միրզախանեան:
- 50,000 ուսու. Մայրա Յովսէփեան:

**Հանգուցեալ Էդա Աթայեանի (Ղուկասեան) յիշատակին**

- 500,000 ուսու. Բնութեան Ապակաւանցման Դէմ Պաքարի Կանանց Խումբ:
- 200,000 ուսու. Արմէն Ղուկասեան:

**Հանգուցեալ Աւետիս Գէորգեանի յիշատակին**

- 500,000 ուսու. Բահրամ ֆալախաթի:

**Ն.Զ. Հայ Կանայ Գրութեան Միութիւն**

**Հայոց Ազգային Մերանոց**

- 1,000,000-ական ուսու. Ծահինշահրի «Հայ Մօր Տարւայ» Ոգեկոչման Յանձնախումբ, Թագուշ Ղեւոնդեան, Մարջան Գրիգորեան (Ղեւոնդեան), Հայրուկ եւ Արմինէ Մովսիսեաններ՝ իրենց ծնողների՝ Սոֆիկ Մովսիսեանի եւ Ասլան Ստեփանեանի յիշատակին, Անիթա Բարֆեան:
- 200,000 ուսու. ոմն:
- 100,000 ուսու. Մագի Յարութեան:
- Նւէրներ եւ սննդամթերք. Սպահանի Հայոց Թեմի առաջ-

նորդ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեան՝ Ա. Զատիկ Տօնի առթիւ, Ծափնշահրի «Հայ Մօր Տարւոյ» Ոգեկոչման Յանձնախումբ, Լորեթա Գալստեան, Բալասան Պօղոսեան, Ռիթա Մինասեան՝ հանգուցեալ Զանի Յովսէփեանի յիշատակին, Սոնա Թումաթարեան, Էլիզ Մարտիրոսեան, Սոֆիկ Գալստեան, Պերճիկ Խուդավերդեան, Արաքս Խուդավերդեան, Բալիկ Մաքարդուխտ, Վերժիկ Թորոսեան, Ծահէն Օհանեան, Աքաւլթօ Ծահբազեան, Նարոյ Յակոբեան՝ Ա. Ներսէսի տօնին՝ իր զաւակի՝ Ներսէսի անան տօնի առթիւ, Ալոյա Ոսկանեան, Զեփիտ Վարդանեան, Վերժիկ Գուրգէնեան, ոմն պարսիկ եւ պարսկուհի:

**Ծափնշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկ.-նախ.**

**Մայրերի Օրւայ առթիւ**

- 500,000-ական ոհալ. Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութիւն, ֆրիդա Ալազեան:
- 300,000 ոհալ. Սիլա Պետրոսեան:
- 200,000 ոհալ. Ալոյա Միրզախանեան:
- 150,000 ոհալ. Քաթրին Ալազեան:
- 100,000-ական ոհալ. Սեդա Միրզախանեան, Անթօ Դանուխ, Սելինա Յովհաննիսեան, Ալլին Գալստանեան, Զարդար Արթունեան, Ծաղկուշ Մինասքանեան:
- 50,000-ական ոհալ. Անահիտ Ծառուկեան, Քրիստինէ Հայրապետեան, Արեւիկ Հայրապետեան, Արմինէ Նազարեան, Մաթիլդա Գալուստեան, Վարդուշ Յովսէփեան, Իշխանուհի Մկրտչեան, Արեգնազ Մարգարեան:

**Փակման ծրագրի առթիւ**

- 1,000,000 ոհալ. Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութիւն:
- 500,000-ական ոհալ. Ծափնիրգայեան երկու ընտանիքներ:
- 300,000-ական ոհալ. Թահմազեան երկու ընտանիքներ:
- 200,000-ական ոհալ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ծափնշահրի Մասնաճիւղ, Հախնազարեան ընտանիք:
- 150,000 ոհալ. Մինասքանեան ընտանիք:
- 100,000-ական ոհալ. Ալոյա Մուրադեան, Զարդար Մինասքանեան, Բաբումեան ընտանիք:
- 60,000 ոհալ. Մելիքեան ընտանիք:
- 50,000 ոհալ. Աւանիսեան ընտանիք:

**Ծափնշահրի Կիրակնօրեայ Դպրոց**

**Փակման ծրագրի առթիւ**

- 200,000-ական ոհալ. Արին եւ Արմէն Քեշիշեաններ, Սերլի Ծափնիրգայեան:
- 150,000-ական ոհալ. Վանէ Սահակեան, Փիւնիկ եւ Նարեկ Փանոսեաններ, Նարեկ եւ Նայիրի Հախնազարեաններ:
- 100,000-ական ոհալ. Ծափնշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի Տեսչութիւն եւ ուսուցչական կազմ, Արգին Մարկոսեան, Էմիլ Բաբումեան, Թենի

Յովսէփեան, Նելի Դանիէլ, Բիրա Մինասեան, Վանէ Թահմազեան, Լեւոնէլ Թահմազեան, Արսինէ Աղախանեան, Էնոիքօ եւ Էլենի Զէլնայեան, Ծանթ Թահմազեան, Նարէ Մարկոսեան, Արինէ Նազարեան, Ծարա Ծափնիրգայեան:

- 50,000-ական ոհալ. Թադէ Սարգսեան, Արիա Վարդանեան, Կարօ Մինասքանեան, Արութին Թորոսեան, Արին Մինասքանեան, Դերիկ Թահմազեան, Գամեր Թահմազեան, Մելիսա Խանմելիքեան:

**Օերիոյ Կրթասիրայ Միութիւն**

**Մայրերի Օրւայ առթիւ**

- 500,000 ոհալ. Դիանա Ղարախանեան՝ իր ամուսնու՝ Աբգար Գալստեանի մահան յիշատակին, Ժուլիէթ Սէթադեան, Սրբոհի Ղազարեան, Քարմէն Խոջեմալ, Էլմա Ծատուրեան:
- 400,000 ոհալ. Հրանուշ Ղարիբեան, Հրանուշ Թահմազեան:
- 350,000 ոհալ. Ժուաննա Պարսամեան:
- 300,000 ոհալ. Էլար Ծատուրեան, Նազիկ Յակոբեան, Արուսեակ Ղազարեան, Ռիթա Զոհրաբեան, Մարօ Ղազարեան, Պերճուհի Նազարեան, Սոնիկ Հայրապետեան, Ալոյա Ղարիբեան, Հրաչուհի Թահմազեան:
- 250,000 ոհալ. դկտ. Սիլա Յովսէփեան:
- 200,000 ոհալ. Հայ Ու. Զհարմահալ Միութիւն, Քաթրին Մարկոսեան, Թելլօ Պօղոսեան, Ժաքլին Քեշիշեան, Սոնիկ Կիրակոսեան, Հրանուշ Հայրապետեան, Աքաւլթօ Դաւթեան, Անահիտ Սիրջանեան, Հիլդա Յովսէփեան, Վարդուհի Մինասեան, Վիոլէթ Դադանեան, Հրաչիկ Ղազարեան, Վարդուշ Դիլանչեան, Խաչիան Սահակեան, Քարմէն Յակոբեան, Սիլա Բաղրամեան, Վարդուշ Ղազարեան, Մառիթա Յարութիւնեան, Եղիաբեթ Ծափնշահրեան, Արաքս Յովսէփեան, Քալլէթ Սիմոնեան, Մարի Ղարիբեան, Ժենիկ Թորոսեան, Արաքս Մինասեան, Հերիքնազ Խաչիկեան, Սիրանուշ Ասատրեան, Լուսիկ Ասատրեան, Ալոյա Մարկոսեան:

- 150,000 ոհալ. Աննիկ Յովսէփեան, Յասմիկ Յովսէփեան, Սոնա Աղազարեան, Ծուշիկ Ղազարեան, Ռուբինա Յովսէփեան, Վանուհի Ղազարեան, Արեւիկ Սահակեան, Բալասան Դիլանչեան, Արաքս Մկրտչեան, Արմինէ Հայրապետեան:
- 100,000 ոհալ. Հուրիգատ Պօղոսեան, Ռիթա Մկրտչեան, Մարիամ Պարսամեան, Խաթուն Խուդավերդեան, Էմիլ Խուդավերդեան, Անահիտ Իսմայիլեան, Քնարիկ Յովսէփեան, Քլար Յարութիւնեան, Էմմա Զոհրաբեան, Իսկուհի Դաւթեան, Էմմա Դեֆբաշեան, Հրանուշ Իսախանեան, Մարիամ Զարգարեան, Լուսիկ Յովսէփեան, Արեհատ Զարգարեան, Մանի Գալստեան, Լուիզա Յովհաննիսեան, Հիլդա Ծառուկեան, Անահիտ Աղախանեան:

*Առաջնորդարանին եւ ազգային կառույցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչուող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Ալլին Քեշիշեանը:*  
*Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրուում է պրն. Գեւիկ Խաչատրեանը:*

**ՄԵՐ ՀԱՍՅԷՆ**

خليفه گري ارامنه جلفای اصفهان  
و جنوب ايران  
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115  
New - Julfa, Isfahan, Iran  
[WWW.Norjugha.ir](http://WWW.Norjugha.ir)  
[WWW.Vank.ir](http://WWW.Vank.ir)  
E-mail: [Sourbv@Yahoo.com](mailto:Sourbv@Yahoo.com)  
Tel: +98-311-6243471-2  
Fax: +98-311-6270999

